Ե. ՏԱՐԻ 1469 ԹԻՒ ՀԱՅՈՑ 4380 ՏՐԻ 17 ՈՒՐԲԱԹ 25 ՆՈՅԵՄԲԵՐ 1888 (Ն. Տ.) 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1888 3 ՌԷՊԻՒԼ ԱԽԸՐ 1306

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درسعادتده غلطه ده نورادونكيان خانده ارهولك
غزته سی اداره سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	գաղղիական արծաթ	160
»	Վեցամսեայ	»	80
»	Եռամսեայ	»	40
Գաւառաց »	Տարեկան	»	206
» »	Վեցամսեայ	»	100
Օտար երկիրներէ	տարեկան	Ֆրանք	50
» »	վեցամսեայ	»	28

Դուրս գրկուած յօդուածոց համար ծախքը հեղինակութեան վրայ է
Խմբագրութեան գրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ, 1888

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՆԴԱԿ Տ. ԽՈՐԷՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ

Գրագէտ Պատրիարք մ'ունենալնիս ակներև է. Գրագիտական հմտութիւնք անհաշտ չեն աշխարհային փորձառութեանց և գործնական կարողութեանց հետ. և եթէ Պատրիարք մը որ գործունեայ պաշտօնավարութեան յոյսեր կուտայ, միանգամայն քաջ գրագէտ է, առաւելութիւն մ'է այս իրեն համար ալ, Ազգին համար ալ, քանի որ Ազգին այս աւուր իմացական վիճակը չէ այն ինչ որ էր Տ. Աստուածատուր Պատրիարքին օրով. Գեղեցիկ հատուած մ'էր այն բանախօսութիւն զոր Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրն արտասանեց Ֆէնէրի յունական մայր-եկեղեցւոյն մէջ. Գեղեցկագոյն գրուած մ'է իւր կոնդակն ալ, թէ՛ գրաբար բնագրովն և թէ մանաւանդ աշխարհաբար ընտիր թարգմանութեամբը, գրուած Ներշնչեալ Շնորհալւոյն Ներսիսի Ընդհանրականէն, և յարմարցուած ժամանակիս պիտոյից ու պահանջմանց. Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքաց անխափան սովորութիւնը չէ այսպիսի կոնդակներ հանել. Շատ կոնդակներ լոկ ձեւական են. Նորընտիր Պատրիարքը լրջօրէն բան մը գրել ուզած է. զի Ազգին ըսելիք կարեւոր բաներ ունէր, կարեւոր պատուէրներ ունէր տալու. Իւր հոգեւոր խրատներ շատ ընտիր են, և անշուշտ պիտի ազդեն այնպիսի սիրտերու որք դեռ չեն փակուած հոգեւոր իրաց վսեմութեան առջեւ, որք չեն կարծրացած աշխարհային կենաց փորձութեամբք ու գայթակղութեամբք.

Բայց Տ. Խորէն Ս. Պատրիարքին կոնդակը լոկ հոգեւոր և աստուածաբանական պատուէրներ չի պարունակեր. Արդի կեանքէն ներշնչուած հատուածներ կան. Եւ նախ, մեր աչքին կը զարնէ հաւատարմութեան պատուէրները զորս կուտայ, յիշելով բոլոր բարիքները զորս Թուրքիոյ Հայք պարտական են օսմանեան մեծազօր Գահուն, ի մասնաւորի մեր Օգոստափառ Վեհապետին Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Կայսեր հայրախնամ իշխանութեան. Հաւատարմութեան պատուէրներ և յորդորներ տրուած կան բազում ուրեք Պատրիարքական Նախընծայ Թուղթին մէջ. Եպիսկոպոսներուն և վարժապետներուն մասնաւորապէս կը պատուիրէ ջանալ հայ ժողովրդեան մէջ եւս քան զեւս արծարծելու հաւատարմութիւն և սէր առ Գահն Օսմանեան. Քանի որ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին պարտաւորութեանց մին, և գլխաւորներէն մին է մշակել և արծարծել Հայ Ազգին մէջ օսմանեան հաւատարմութեան զգացումները, պէտք է խոստովանիլ թէ Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրն սքանչելապէս կը կատարէ իւր պարտաւորութեանց այս մասն յորէ մտի իւր գահակալութեան՝ թէ՛ բանիւ և թէ գրչով.

Այս տեսութեամբ ուշագրաւ է մանաւանդ Ն. Սրբազնութեան պատուէրն առ վիճակաւոր Եպիսկոպոսունս, զոր կը կրկնենք աստ, գրաբար բնագրէն առնլով.

«Եղբա՛րք իմ եպիսկոպոսք, քանզի ի ձեռն Պատրիարքարանիս հրովարտակ յարքունուստ առեալ է ձեզ ի կառավարել զեկեղեցի ոչ ըստ աշխարհի հոգեւոր բարեկարգութեան մասին միայն՝ այլ և ըստ աշխարհի արտաքին խաղաղութեան, վասն որոյ աղաչեմ զձեզ քարոզել և յորդորել զհաւատացեալսն յերախտագիտութեան պարտս առ Գահն Օսմանեան յաղագս անհամար խնամոց նորա առ ազգս մեր յաւուրց անտի հաստատութեան ի վերայ երկրի. որպէս հարքն մեր՝ և մեք հաւատարիմ հպատակութեամբ շահեցաք զանսասան վստահութիւն իշխանութեան ամենաբարեբար Թագաւորին մերոյ ի վերայ ամենայն ազգին։ —Հնազանդ լերուք, ասէ սուրբ առաքեալն, տերանց յերոց մարմնաւորաց ոչ միայն բարերարաց՝ այլ և կամակորաց։ —Եթէ ըստ պատուիրանի առաքելոյն տեարցն կամակորաց անգամ հնազանդել հրաման աստուածային է, ո՛րչափ եւս առաւել բարեբար Թագաւորութեանս Տանն Օսմանեայ, որ ընդ բարեգործ թեւարկութեամբ հզօր իշխանութեան պահպանէ ամենայն ինչ զմեր, զհաւատ, զլեզու, զծէս եւ զհոգեւոր իշխանութեանս մերոյ զպարագայս, զեկեղեցիս, զդպրանոցս, զաղքատանոցս, զհիւանդանոցս։ Եւ ոչ այսչափ, այլ և անխտիր ի պաշտօն ծառայութեան երկրին առնու զընտիր ընտիրս յազգէ մերմէ եւ պատուէ զորս միանգամ իմաստունս գտանէ եւ բաւականս ի գործ կառավարութեան աշխարհին։ Ցուց արարէ՛ք ժողովրդեան, եղբա՛րք, և զայս բան Առաքելոյն որ յաղագս խնդրոյ հպատակութեան, թէ—[illegible] (Ա. Տիմոթ. Ջ. 3)

*

Իւր կոնդակաւ Տ. Խորէն Ս. Պատրիարքն հայ ժողովրդեան մէկ մեծ վէրքին վրայ մատը դրած է համարձակապէս, յիշելով «յայտնի անկարգութիւնս և դժնեայ տեսիլս ազգանուեան բարուց որ զնախնի և զհայրենի անմեղութեանն մեր կորով սպառնայ թուլացուցանել». Ընտանեկան բարուց ապականութիւն, անհատական բարուց ապականութիւն, սակաւութիւն ամուսնութեանց, սակաւութիւն և տկարութիւն ծննդոց, քայքայումն ընտանեաց,—սոքա են զարդիս հայ ժողովրդեան մեծագոյն աղէտներէն մին. Ուրիշ մայրաքաղաքներու մէջ ալ կայ բարուց ապականութիւն, բայց ուրիշ քաղաքակիրթ ազգերու մէջ գաւառային անեցուն ոյժերը մի կողմէ կը դարմանեն մայրաքաղաքներուն պատճառած բարոյական և ֆիզիքական աւերներն, և միւս կողմէ քաղաքակրթութիւնն իւր ընտիր կողմերով կը փոխարինէ իւր յոռի կողմանց անպատեհութիւնները. Մեր մէջ քաղաքակրթութեան տգեղ կողմերն աւելի ծաւալած են. Հիմնաւոր կրթութեան միջոցներէն դեռ զուրկ կը մնանք, և սակայն եւրոպեան վէպերու մէջ նկարագրեալ մոլութեանց մէկ մեծ մասն հսկայաքայլ կ'արշաւէ, կը հաստատուի մեր մէջ. Գաւառները Կ. Պոլսէն օրինակ կ'առնուն, և այն գաւառք որոց վրայ յոյս կը դնէր Նախորդ սերունդն՝ իբրեւ աղբիւր նորոգման ժողովրդային ոյժերու, անհատական եւ ընտանեկան անբարոյականութեան ճամբուն մէջ մայրաքաղաքին հետ արդէն կը մրցին. Մեր գրիչն յառաջ չերթար նկարագրել բազմակնութեան և նոյն իսկ բազմայրութեան հետեւանքներն որք՝ մասամբ պանդխտութեան և մասամբ ալ բարուց ապականութեան բերմամբ՝ արդէն տարածուած են այլ և այլ գաւառներու մէջ. Բարուց ապականութեան պատճառ հոգեւոր անկումը չէ միայն, և հետեւապէս միայն հոգեւոր խրատներ չեն բաւեր չարեաց դարման տանելու. Տնտեսական, ընկերական և իմացական պայմանք եւս մեծագոյն բաժին մ'ունին Նախնի կարգաց ու կազմութեանց այս քայքայման մէջ. Օրինակի համար, ամուսնութիւնք և մանաւանդ ծնունդք թէ՛ Կ. Պոլսոյ և թէ գաւառաց մէջ կը նուազին. Տնտեսական արդի պայմանք գլխաւոր պատճառ մ'են այս անպատեհութեանց, բայց նո՛յն իսկ տնտեսական արգելքները նոյն չեն ամենուն համար և ամենուրեք. Կ. Պոլսեցին որ նիւթական նկատումներով ետ կը կենայ ամուսնութենէ և գաւառացին որ նմանապէս նիւթական պատճառներով չամուսնանար, կամ մանաւանդ շատ զաւակ չունենար, կը հպատակին տնտեսական տարբեր տարբեր պայմաններու, և կը գտնուին տարբեր տարբեր դժուարութեանց կամ փորձութեանց առջեւ. Երբ չարիք մը հետեւանք է անչափ տարբեր պատճառներու, ընդհանրապէս դժուար է հիմնական դարման մը առաջարկել. Եզովելով հանդերձ Ս. Պատրիարք Հօր բարոյասէր եռանդը, չենք յուսար թէ կոնդակ մը կամ քանի մը կոնդակներ բաւեն արմատախիլ ընել տիրող անբարոյականութեան մեծ չարիքն. Անհատական պարագաներու մէջ, Ս. Պատրիարք Հօր բարեդէպ խրատէն շատեր կրնան օգտուիլ, և այս պատճառաւ շնորհակալ պէտք է ըլլինք որ Ն. Սրբազնութիւն իւր պաշտօնավարութեան առաջին օրէն կ'առաջադրէ իւր մեծ ազդեցութիւնն ի գործ ածել յօգուտ բարուց բարւոքման. Եկեղեցականութեան ձեռքն այս մասին շատ միջոցներ կան, և քանի որ եկեղեցականութիւնն ինք ընծայէ բարուց սրբութեան գեղեցիկ օրինակը, կրնայ նպաստաւոր ներգործութիւն մ'ընել հայ ընկերութեան բարոյականին վրայ.

⁂

Ս. Պատրիարք Հայրը կը խօսի ո՛չ միայն աշխարհականաց այլ և եկեղեցականաց դասուն. Բայց այս մասին պակաս կէտ մը կը նշմարենք կոնդակին մէջ. Ժամանակէ մ'ի վեր աչքի զարկած պակասութիւն մ'է որ հայ հոգեւորականութեան կարողագոյն անդամք ոմանք կը խորշին գաւառային պաշտօններէ. Իրենց կարողութեանց վրայ այնչափ մեծ համարում ունին որ մինչև պատրիարքական աթոռին աչք կը տնկեն, բայց միւս կողմէ իրենք զիրենք այնչափ տկար կը զգան որ գաւառային պաշտօններն իրենց կարողութիւններէն գեր ի վեր կը դատեն. Իբրև յետին զիջում, յանձն կ'առնուն առ առաւելն ծովեզերեայ քաղաքաց մէջ պաշտօնավարութիւն. Բայց իրենց դժբախտութենէն, — Ազգին ալ դժբախտութենէն, —Հայ Ազգին ամենամեծ մասն այնպիսի երկրի մը մէջ բնակեալ է որ ծովեզերեայ չէ բնաւ. Այս արժանընտիր եկեղեցականաց առաջնորդական պաշտօնավարութենէն ո՛րչափ ալ մեծ բարիքներ ակնկալենք, յայտնի է թէ չենք կրնար Ներքին գաւառաց հայ ժողովուրդները Սև Ծովու, Մարմարայի կամ Միջերկրականի եզերքը փոխադրել, որպէս զի կարենան վայելել հայ եկեղեցականութեան մէկ ընտրելագոյն մասին հովուութեան բարիքներն. Ակներև է ուրեմն թէ այս եկեղեցականաց անկ է երթալ ուր որ կոչուին, ուր որ Եկեղեցւոյն շահն ու պէտքը կոչեն զիրենք. Կը սպասուի որ Նոր Պատրիարքն այս մասին զանգառու եկեղեցականներն ուղղութիւն ածէ, թէ՛ իրենց և թէ Ազգին օգտին համար. Թէպէտ գրով չէ պատուիրած զայս, Տ. Խորէն Ս. Պատրիարքն անշուշտ գործքով զանց չառնուր.

Ս. Պատրիարք Հայրն ազդու յորդորներ կուտայ ծնողաց՝ ո՛չ միայն խնամ տանելու իրենց զաւակաց դաստիարակութեան, այլ և օտար դպրոցներէ զգուշանալու, և ընդդէմ ոմանց իմաստակ առարկութեան թէ ա՛յլ է ուսումն ա՛յլ է կրօն՝ կը յիշեցնէ հոգեբանական ճշմարտութիւնը թէ «դաստիարակութիւն և ուսումն զբարս և զխառնուած դաստիարակին հարկաւորապէս փոխադրէ ի հոգի աշակերտին. Թեթեւ ինչ շարժումն ոգւոյ, սպրդումն փոքու իրիք բառի ի բերանոյ և խուն մի երեւոյթ զգացական ի ծածուկ և յանդգաստից հոսմամբ խաղայ ի դաստիարակէն և փոխարկի ի սիրտ մանկանց.» Ո՛րչափ աւելի կը ներգործուին աշակերտք երբ այն դպրոցներ ուր հայ ծնողքներ կը դնեն ի սէր կրթութեան իրենց զաւակաց՝ յատուկ նպատակ ունին Հայոց մէջ տարբեր կրօն մը մուծանել. Բայց քանի որ խնդրոյ մը երկու կողմերը միանգամայն պէտք է նկատել, պատրիարքական այս գեղեցիկ պատուէր շատ կը զօրէ՞ այն գաւառային վայրեր ուր մերայինք չեն կրցած կանոնաւոր դպրոց մ'ունենալ, մինչ ամերիկացի կամ եւրոպացի կրօնային գործիչք՝ իրենց մասնաւոր դիտմանց համար՝ ըստ կարի բարեկարգ դպրոցներ բացած ունին. Պէտք չէ՞ միթէ ոյժ տալ Միացեալ Ընկերութեանց՝ ո՛չ միայն այժմեանները պահպանելու այլ և գաւառային նոր կեդրոններու մէջ նոր դպրոցներ բանալու համար. Պէտք չէ՞ միթէ ամենուրեք հայ Առաջնորդք իրենց ջանից գլխաւոր նպատակն ընեն նոր դպրոցներ բանալ և կեցածները բարւոքել. Եւ ո՞չ ապաքէն այն գաւառաց մէջ որք երկար միջոցներ անհովիւ կը թողուին՝ հայ դպրոցն հայ Եկեղեցւոյն չափ կը վնասուի.

⁂

Այո՛, գաւառային ոյժերն եւեթ բաւական չեն ժամանակիս ամեն վտանգներուն դէմ դնելու և Եկեղեցին ըստ արժանւոյն պաշտպանելու. Կեդրոնէն ալ օգնութեան պէտք կայ. Ի դէպ է այս ճշմարտութիւնն յիշեցնել, և հայ բարերարներու հոգածութեան յանձնարարել գաւառային բազմադիմի պէտքերը. Մեծագոյն և հարստագոյն ազգաց մէջ իսկ, թէեւ մեծ են հաւաքական կամ հասարակային ոյժերը, բայց անհատական մեծագործութեանց պէտքը միշտ կ'զգացուի, և անհատական բարերարութիւնք կարեւոր պէտքեր կը լնուն միշտ. Ո՛րչափ աւելի հայ ժողովրդեան մէջ, ուր ա՛յնքան թոյլ և տկար են հասարակային ոյժեր. Ի դէպ էր ուրեմն որ Նոր Պատրիարքն իրենց քրիստոնէական և ազգասիրական պարտաւորութիւններն յիշեցնէր Ազգիս մեծատանց, հետեւեալ ընտիր հատուածով.—

Մեծատո՛ւնք, և որք բարեվիճակ կեանս յաջողեալ է ձեզ ի Տեառնէ, պատուիրեմ, զի պարգեւ Աստուծոյ համարիցէք զմեծութիւն ձեր և զբաղդաւորութիւն, և մի՛ միայն պտուղ ճարտարամտութեան և աշխատութեան անձանց։ Աստուած է աղբիւր և պարգեւիչ ամենայն բարութեանց. որ ոք մեծատուն ի մեծութեան և յառատութեան ընչից մոռանայ զԱստուած և զաստուածայինսն, մոռանայ զաղքատս և զմերկս և զհիւանդս, անարժան է պարգեւաց Աստուծոյ, անկանի ի մեծութենէ կամ ինքն մեծատունն եւ կամ սերունդ նորա, եւ զրկի ի յաւիտենական կենաց. զի որ յանիրաւ մամոնայի չեղեւ հաւատարիմ, զճշմարիտն մամոնայ զժառանգութիւն արքայութեան Աստուած նմա ոչ հաւատայ։ Ցուցէ՛ք մեծատունք զպատուանդան Աստուծոյ որ ի վերայ անողորմաց, մի՛ այնչափ յարեալ մնալ ի կորստական բարիս աշխարհի՝ զի այսպիսի կարի չար զգայապաշտութիւն խաւարէ ի ձեզ զհաւատ յարութեան, զյոյս յաւիտենական կենաց և զսէր անսահման Թագաւորութեան արդարոց ընդ աջմէ Աստուծոյ։

Կ'արժէ որ Տ. Խորէն Ս. Պատրիարք Հօր կոնդակն, որ ուրոյն տետրակի մը ձեւով և ընտիր տպագրութեամբ հրատարակուած է թէ՛ գրաբար բնագրով և թէ աշխարհաբար թարգմանութեամբ, ամեն հայ ընտանեաց մէջ ուշի ուշով կարդացուի և ամեն հայ անհատի մտադրութեան առարկայ դառնայ. զի ամեն կարգէ և ամեն վիճակէ Հայերու համար շահեկան մտածութեան կէտեր կը պարունակէ, և իւր գրական արժէքովն ալ գովելի կը հանդիսանայ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

Վիեննա, 2 դեկտ.— Կայսեր հետ մի և նոյն ժամանակ Միրամարի դղեակն հասաւ Ելիզաբեթ կայսրուհին, Քորֆուէն վերադառնալով. Ամեն աւստրեան լրագիրք այս առաւօտ խմբագրականներ կը հրատարակեն Ֆրանձ Յօզէֆ կայսեր գահակալութեան 40րդ տարեդարձին վրայ. Վիեննայի քաղաքապետութիւնն հրատարակել տուաւ գիրք մը՝ խումբ մը նշանաւոր հրապարակագրաց ձեռամբ գրեալ, որ կը յիշատակէ Ֆրանձ Յօզէֆ կայսեր իշխանութեան միջոցին կատարուած նշանաւոր գործերն ու դէպքերն. Երեսփ. ժողովոյն մէջ, նախագահ Պ. Սմոլքա ճառ մը արտասանեց. Թէեւ կայսրը փափաք յայտնած է որ այս տարեդարձ բարեգործութեամբք եւեթ տօնուի, նախագահին կարծիքն է թէ ազգին աշխատապէս ընտրեալ ներկայացուցիչներուն կը վայլէ յերեւան բերել այս տարեդարձին մեծ կարեւորութիւնը. Պ. Սմոլքա յուզմամբ յիշեց թէ 1848 դեկ. 3ին, ի գլուխ աւստրեան առաջին Երեսփ. ժողովոյն՝ ինք գնացած էր ժողովոյն շնորհաւորութիւնները մատուցանել Կայսեր՝ իւր գահակալութեան առթիւ. Համառօտիւ պատմեց Կայսեր բարգաւաճուն իշխանութիւնն, յիշեցուց Վեհապետին և ազգին սերտ համամտութիւնն և փոխադարձ սէրը Կայսրը կրնայ հպարտութեամբ նայիլ այն 40 տարւոյ վրայ. Ֆրանձ Յօզէֆ Կայսր կը կառավարէ Տէրութիւն մը որ ամեն ժամանակէ աւելի յարգանք կը ներշնչէ, իբրեւ հզօր և հաւատարիմ դաշնակից պատկառանք կ'ազդէ, և իւր ժողովրդոց անսահման սիրով զօրացեալ է.»

—Վիեննա, 3 դեկտ.—Երեկոյին, փողոցներու մէջ փակցուցին Կայսեր մէկ ինքնագիր նամակն առ նախարարապետ կոմս Թաաֆֆէ. Կայսրը շնորհակալութիւն կը յայտնէ մարդասիրական բազմաթիւ գործերուն և հաստատութիւններուն համար որովք՝ ըստ իւր բաղձանաց՝ Տէրութեան ժողովուրդք տօնեցին իւր գահակալութեան 40րդ տարեդարձն, եւ սիրոյ և հաւատարմութեան փորձերուն համար որք արտայայտուեցան իրեն.

—Բեռլին, 3 դեկտ.—Բէօրզէն Զայթ. կը ծանուցանէ թէ գերման բանակին հրետանեաց ոյժը պիտի աւելցուի տարեկան 50 միլիոն մարքի բացառիկ ծախքով մը. —Նոյն լրագիր կ'իմանայ թէ Ռուսիա դիւանագիտական ձեռնարկ մը կ'ընէ Թեհրանայ մէջ, որովհետեւ Շահին կառավարութիւնն հիւպատոսական արտօնագիր չէ տուած Մէշէտի ռուսական նորահաստատ հիւպատոսութեան, մինչ Անգլիա զինուորական գործակալ մ'ունի Մէշէտի մէջ, (Կեդր. Ասիոյ և մանաւանդ Աֆղանստանի կողմն հսկելու համար).

—Լոնտոն, 4 դեկտ.—Ստանտըրտ ին Հռոմայ թղթակիցը կ'իմանայ թէ Ֆրանսական կառավարութիւնն ամեն աջակցութիւն ընծայած է Պապին՝ եթէ յանձն առնու Հռոմէ մեկնիլ և ի Ֆրանսա մեկնիլ. (Պապն Հռոմէ կրնայ մեկնիլ, որովհետեւ Իտալիոյ Տէրութիւնն և ազգը չեն հաճիր որ իտալեան հողէն մաս մը տրուի Պապին աշխարհական իշխանութիւնը վերահաստատելու համար. Բայց Ֆրանսա որ պատրաստ է եղեր հիւրընկալել Պապը,

---

—)(71)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺՈՐԺ ՕՆԷ

ԿԵՆԱՑ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

ՍԵՐԺ ԲԱՆԻՆ

—Բայց, ըսաւ տիկին Տէվառէն, միթէ պարա՞պ տեղը ձեզ դիմած պիտի լինիմ։ Միթէ չպիտի՞ յիշէք թէ ձեզ համար վստահելի եւ անձնուէր բարեկամուհի մը եղայ ես։ Ձեր հարստութիւնը ես պատրաստել սկսայ. ձեր առաջին ստակը ես դրի ձեռքերնուդ մէջ։ Դուք ազնիւ մարդ մ'էք. անցեալը չպիտի մոռնաք։ Անարգուեցաք, իրաւունք ունիք վրէժ լուծելու, բայց խորհեցէ՛ք որ պիտի հարուածէք երկու կիներ որք բարիք միայն ըրած են ձեզ։ Վեհանձն եղէք, արդար եղէք. խնայեցէ՛ք։

Բէյրոլ անողոք մնաց. իւր կծկուած դէմքը չշտկուեցաւ։

—Տեսէ՛ք թէ նուաստութեան ո՛ր աստիճանին հասած եմ, ըսաւ, որ տեղի չեմ տար ձեր խնդրանաց։ Բարեկամութիւն, երախտագիտութիւն, վեհանձնութիւն, բոլոր այն ազնիւ զգացումները զորս ունէի, այդ գարշելի սէրը լափեց։ Այժմ այդ կինը միայն կայ յիս։ Անոր համար կը մոռնամ ամեն բան, կը նուաստանամ, կը խանդարուիմ։ Եւ աւելի անագորոյնը սա է թէ այս վիճակս գիտեմ եւ չեմ կրնար տարբեր կերպով շարժիլ։

—Դժբա՛ղդ արարած, մրմնջեց տիրուհին։

—Այո՛, շատ դժբաղդ, հեծեծեց Բէյրոլ թիկնաթոռի մը վրայ իյնալով։

Տիկին Տէվառէն մօտեցաւ նմա և ձեռքն անոր ուսին վրայ դնելով մեղմիւ.

—Բէյրո՛լ, կ'արտասուէ՞ք։ Ուրեմն... ներեցէ՛ք։

Սեղանաւորն ուժգին շարժումով մը ոտքի ելաւ, և ճակատը խոնարհած.

—Ո՛չ, ըսաւ, իմ որոշումս անդրդուելի է։ Կ'ուզեմ աշխարհ մը դնել Ժաննի և Սէրժի միջեւ. այս իրիկուն, եթէ Սէրժը մեկնած չլինի, բողոքագիրս դատարանին պիտի յանձնեմ։

Տիկին Տէվառէն չպնդեց այլ եւս։ Զգաց որ ամուսնոյն սիրտը անդառնալի կերպիւ փակուած էր։

—Լա՛ւ, ըսաւ, շնորհակալ եմ դարձեալ որ բաւական յիշողութիւն ունեցաք ինձ իմաց տալու համար։ Կրնայիք այդպէս ալ չընել։ Երթա՛ք բարով, Բէյրոլ։ Ձեր և իմ միջեւ, ձեր խիղճը դատաւոր կը թողում։

Սեղանաւորը խոնարհեցաւ մրմնջելով.

—Մնաք բարո՛վ։

Եւ դանդաղաքայլ, գրեթէ տատանելով, հեռացաւ։

Արեգակը բարձրացած էր ճառագայթարձակ եւ կը լուսաւորէր պարտիզին ծառերը։ Բնութիւնը տօնական երեւոյթ մ'ունէր, ծաղկունք անոյշ բուրմամբ կը լնուին օդը, եւ կապուտակ երկնից մէջ, ծիծեռնակները կ'անցնէին, զիրար հալածելով սուր ճիչերով։ Երկրային հրճուանաց եւ իւր վշտին միջեւ կեցած այս հակապատկերն յուսահատութեան մատնեց զտիկին Տէվառէն, որ յանկարծ փակեց պատուհանը։ Կ'ուզէր տիեզերքը սգոյ մէջ տեսնել։ Ընկճեալ մնաց ժամանակ մը զոր չկրցաւ չափել, իւր դառն խոկմանց մէջ թաղուած։

Այսպէս ամեն բան վերջացած էր։ Եւ այդ մեծ բարգաւաճումն, այդ բարձր պատուաւորութիւնն այն վաճառատան որ իւր գործն էր, ամեն բան կը քայքայէր։ Իւր աղջիկն իսկ կրնար խոյս տալ իրմէ, և համակերպութեամբ՝ հետեւելով վատ ամուսնոյն զոր կը պաշտէր հակառակ անոր յանցանաց, գուցէ նոյն իսկ յանցանացը պատճառաւ, պիտի երթար օտար երկիրներ թափառական վարել կեանք մը որ չպիտի յապաղէր մահուամբ վերջանալ։ Վասն զի, այդ անոյշ և փափուկ աղջկան նիւթական բարեկեցութիւն պէտք էր և մանաւանդ բարոյական ապահովութիւն։ Ամուսինը, ճակատագրին բերմամբ, անկումէ անկում գլորելով, պիտի իյնար առուակին մէջ եւ իրեն հետ պիտի մղէր այդ պաշտելի աղջիկը։ Եւ տիրուհին կը տեսնէր իւր դուստրն, այն մանուկը՝ զոր փետուրներու եւ մետաքսեղինաց մէջ մեծցուցած էր խանդաղատանօք, որ խշտեակի մը վրայ կը մեռնէր թշուառութեամբ։ Ինք իմանալով զայս, կը վազէր կ'երթար, եւ ամուսինը՝ մինչեւ վերջին օրը թշնամալից, չարամիտ, կ'արգիլէր իրեն մտնել այն խուցն ուր օրհասական կը հեծեծէր Միշլին։

Սոսկալի կատաղութիւն մը պատեց զինքը։ Իւր մայրական մարմինն ըմբոստացաւ, եւ դահճին լլկութեան մէջէն, սա բառերը մռնչեց.

—Այդ բանը չպիտի ըլլայ։

Դուռը բացուելով տիրուհին ինքզինքին եկաւ։ Ոտքի ելաւ։ Մառէշալն էր, կարի յուզեալ և խռովեալ։ Բէյրոլի գալէն յետոյ, ի՛նչ ընելիքը չգիտնալով մինչեւ [illegible] գնացած էր։ Եւ հոն՝ զարմացմամբ տեսած էր որ դրամատնեակները գոց էին։ Տեղեկութիւն հարցուցած էր դռնէն՝ մին այն փառաւոր անձանց, կապոյտ չուխայէ հագուստով, որք այնքան պատկառանք կ'ազդէին բաժնետէրաց. այդ պաշտօնէայն ցասմամբ իմացուցած էր իրեն թէ աղջիկ երեկոյին, վարչական խորհրդոյ մէկ անդամին բողոքանաց վրայ, ոստիկանութիւնը խուզարկութիւն մը կատարած էր դրամատան մէջ թէ հաշուետումարները դատական իշխանութեան տրուած էին և ոստիկանութեան պաշտօնէին մեկնումէն յետոյ, դռները կնքուած էին։ Մառէշալ, զարհուրած, փութացած էր Սէն-Տօմինիք փողոց վերադառնալ, Տիկին Տէվառէնին իմաց տալու համար։ Հարկ էր փութանակի միջոցներ ձեռք առնուլ այս նոր դժուարութեան դէմ դնելու համար։ Քննութեան այս սկզբնաւորութիւնն արդէօք դատական գործողութեան մը նախաբա՛ն էր։ Եւ յայնժամ, ի՛նչ պատասխանատուութիւն պիտի ծանրանար իշխանին վրայ։

Տիկին Տէվառէն առանց բառ մ'արտասանելու ունկն դրաւ Մառէշալի խօսքերուն։ Այս անգամ դէպքերն իւր կարծածէն շատ աւելի գահավէժ կ'ընթանային։ Վարկի դրամատան գործին մէջ շահ ունեցող անձանց երկիւղը Բէյրոլի ատելութիւնը՝ կանխած էր։ Ի՞նչ երեւան պիտի հանէր արդեօք արդարութիւնն Հէրձոկի խառնակ գործառնութեանց մէջէն. Գողութիւններ, գուցէ կեղծ ստորագրութիւններ։ Արդեօք պիտի գային իշխանն իւր տա՞ն մէջ ձերբակալել։ Տէվառէն վաճառատունն, որ բարապանի մը այցելութիւնը չէր ընդունած բնաւ, պիտի անպատուէ՞ր արդեօք ոստիկանական պաշտօնէից ներկայութեամբ։

Տիրուհին, այդ վճռական ժամուն, ինքզինքը գտաւ։ Հին օրերու քաջարի կինն երեւան ելաւ վերստին։ Մառէշալ այս յանկարծական կորովէն շատ աւելի ահաբեկեցաւ քան այն տկարութենէն որուն կը յաջորդէր այն։ Եւ տեսնելով որ տիկին Տէվառէն դէպ ի դուռը կը դիմէ, նշան մ'ըրաւ զայն կեցնելու համար.

—Ո՞ւր կ'երթաք, տիկին, հարցուց վրդովեալ։

Տիրուհին ակնարկ մ'ուղղեց որ սառեցուց զինքը, եւ խուլ ձայնով մը պատասխանեց.

—Կ'երթամ հաշիւներս կարգադրել իշխանին հետ։

Եւ փոքր սանդուղին դռնէն անցնելով, տիկին Տէվառէն իւր փեսային յարկն ելաւ։

ԻԲ

Սէրժ՝ Հէրձոկէն բաժնուելով Սէն-Տօմինիք փողոց գնաց։ Իւր տուն վերադարձը կրցածին չափ յապաղեցուցած էր, սակայն փողոցները բազմութեամբ կը լեցուէին։ Կրնար ծանօթ մարդոց պատահիլ։ Որոշած էր դիմագրաւել իրեն սպասող ակընկալութեան։ Ճամբան կը խորհէր թէ ի՛նչ պիտի ընէր և միջոց մը կը որոնէր որով հաշտութիւնը կարելի լինէր իրեն եւ իւր երկիւղալի զոքանչին միջեւ։ Այլ եւս հպարտութիւն չէր կեղծեր։ Ինքզինքն ընկճեալ, ջախջախեալ կ'զգար։ Մինակ, տիկին Տէվառէն իշխանութիւն ունէր զինքն յոտին կանգնեցնելու։ Եւ դժբաղդութեան մէջ վատ, ինչպէս ամբարտաւան եղած էր բարգաւաճման մէջ, կանխաւ կ'ընդունէր այն նուաստութիւնները զորս իրեն ընդունիլ տալ ուզէր տիրուհին. ամեն բան, բաւական էր որ իւր պաշտպանութեամբ հովանաւորէր զինքը։

Կը վախնար. չէր գիտեր թէ մինչեւ ո՛ւր մղած էր զինքն Հէրձոկ։ Բարոյական իմացականութիւնն անհետանալով անգիտակ կը թողուր զինքը իւր յանցանաց մեծութեան, կրելով սակայն տարտամ բնազդումը մը անցուցած վտանգին։ Ելմտագէտին վերջին խօսքերը միտքը եկան. «Ամեն բան յայտնեցէ՛ք ձեր կնոջ. ինքը կարող է ազատել զձեզ»։ Ըմբռնեց անոր բոլոր կարեւորութիւնն և որոշեց հետեւիլ տուած խորհրդոյն։

(Շարունակելի)

կարո՞ղ է իւր հողէն մաս մը անջատելով վերահաստատել պապական աշխարհային Թագաւորութիւնը․ Քանի որ այսպիսի խորհուրդ մը միտքէն անցնելն անգամ յիմարութիւն է, Պապն ի՞նչ կը շահի Ֆրանսա երթալով․)

—Ի Սուաքին անգլիական զօրք ղրկելու տնօրինութիւնն Երեսփ․ Ժողովոյն մէջ ջերմապէս քննադատեցաւ․ Ի դիմաց կառավարութեան Պ․ Սմիթ գործին կարեւորութիւնը պզտիկցուց, ըսելով թէ Գահիրէէ Սուաքին անգլ․ զօրք պիտի ղրկուին, որք յետոյ Սուաքինէ Գահիրէ պիտի վերադառնան․ Արմատական Պ․ Կրահամ ամբաստանեց զնախարարը թէ Ժողովոյն հետ կը խաղայ․ Պ․ Կրահամ անմիջապէս պատժուեցաւ, նոյն նստին համար Ժողովէն դուրս ելնելու դատապարտուելով․ Բայց Պ․ Ճօն Մորլի լրջօրէն յուզեց խնդիրը, նկարագրելով Սուաքինի դըժնդակ կացութիւնը, թշնամի արաբ ցեղերն որք Սուաքինի պղերաց մօտ զօրեղ դիրքեր բռնած են և կը ռմբակոծեն քաղաքը, զոր հետզհետէ երկաթեայ շրջանակի մը մէջ կ՚առնուն․ Պ․ Մորլի հերքեց այն կարծիք թէ Սուաքինի գրաւումը կարեւոր է գերեվաճառութիւնն արգիլելու․ Սուտանի Նախկին անգլիական արշաւանաց տխուր կամ ամուլ հետեւանքներն յիշեցնելով, պնդեց որ անգլ․ կառավարութիւնը չձեռնարկէ նոր արշաւանքի մը, որ չգիտենք թէ մարդու և դրամի ո՛րչափ մեծ կորուստներ պիտի պատճառէ․ Պահպանողական մը, Սըր Լ․ Փոլլի, որ երբեմն կարող վարիչներէն մին էր Հնդկաստանի, օժ տուաւ Արմատական Պ․ Ճօն Մորլիի․ Արտաքին գործոց խորհրդական Սըր Ճ․ Ֆերկիւսոն պատասխանեց թէ Անգլիացիք յարձակողական գործողութիւններ պիտի չընեն, այլ զօրեղապէս պիտի պաշտպանեն զՍուաքին․ Հա՛րկ է կամ նոր զօրք ղրկել ի Սուաքին և կամ պարպել Կարմիր ծովու այս կարեւոր քաղաքը, գաղափար մը զոր Սըր Ճ․ Ֆերկիւսըն դատապարտեց․ Եգիպտական Գանձուն վիճակը կը ներէ հոգալ այս զինուորական գործողութեան ծախքերը․ Պատերազմական Նախարար Պ․ Սթէնհոփ Անգլիոյ պատիւը պաշտպանելու պէտքն յայտնեց, և բացատրեց թէ Սուաքին ղրկուող անգլ՝ զօրաց պաշտօնն է քաղաքը միայն պաշտպանել և պաշարումը վերցնել․ Լորտ Ռանտոլֆ Չըրչիլ, թէեւ երբեմն պահպանողական նախարար, օժ տուաւ Պ․ Ճօն Մորլիի, և Պ․ Սմիթ պատասխանեց թէ կառավարութիւնը կը գործադրէ Խորհրդարանին արդէն Եգիպտոսի նկատմամբ ընդունած քաղաքականութիւնն, և յոյս տուաւ անգլ․ զօրքերն օր մը քաշել հանելու բովանդակ Նեղոսի հովտէն․ 101 ի դէմ 136 քուէներ միայն իրաւունք տուին Նախարարութեան․

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ Ի ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆՍ

Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրըն երէկ այցելութիւն տուաւ այն դեսպանաց որոց թարգմանք Պատրիարքարան եկած էին արդէն ի շնորհաւորութիւն․ Ն. Ամենապատուութիւն՝ որուն կ՚ընկերանային Քաղաքական Ժողովոյ դեր–ատենապետ Վսեմ. Իլիաս էֆէնտի Զայեան եւ Ազգ. Պատրիարքարանի գործակատար Վսեմ. Աբրահամ էֆէնտի Ֆրէնկեան, նախ և առաջ գնաց ռուսական դեսպանատունն ուր սիրալիր կերպիւ ընդունուեցաւ Վսեմ. Պ. Նէլիտօֆի եւ առաջին թարգման Պ. Իվանոֆի կողմէ․ Ռուսիոյ Վսեմ. դեսպանին հետ քառորդ ժամու տեսակցութենէ մը յետոյ, Ս. Պատրիարք Հայրն այցելեց ֆրանսական դեսպանատունը․ Մօնդէպէլլօ կոմսն արձակուրդով բացակայ գտնուելով մայրաքաղաքէս, դեսպանատան գործակատար Պ. Էմպէռ ընդունեց զՆ. Ամենապատուութիւն և սիրալիր ընդունելութիւն մ՚ընելով յայտնեց թէ պիտի փութայ իւր Վսեմ. դեսպանին հաղորդել ի Բարիզ, Հայոց Պատրիարքին այցելութիւնը․ Յետոյ գնացին անգլիական դեսպանատունն ուր ընդունուեցան Սըր Ուիլիըմ Հուայթի և երկրորդ թարգման Պ. Մարինիչի կողմէ․ Քառորդ ժամու տեսակցութենէ մը յետոյ, Ս. Պատրիարք Հայրն հրաժեշտ կ՚առնուր, սակայն Մեծին Բրիտանիոյ Վսեմ. դեսպանին հրաւիրանօք, Ն. Սըրբազնութիւն քառորդի մը չափ եւս նստաւ․ Աւստրիական դեսպանատան մէջ եւս, ուր այցելեցին Ս. Պատրիարք Հայրն և Վսեմ. Իլիաս էֆէնտի ու Աբրահամ էֆէնտի, սիրալիր կերպիւ մեծարուեցան Վսեմ. Պառոն տը Քալիչէի կողմէ․ յետոյ գնացին գերմանական դեսպանատունը, սակայն Պ. տը Րատովից բացակայ լինելով, Ս. Պատրիարքն իւր այցետոմսը թողուց և մեկնեցաւ․

Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրը չորեքշաբթի և հինգշաբթի գիշերները Բերա անցուց․

Վեհ. Սուլթանը՝ Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյի շնորհած երկրորդ կարգի Օսմանիէ պատուանշանի առթիւ տուած կայսերական Պերաթին մէջ՝ Լուսինեան մականունը յիշած է զԽորէն Սրբազան և կը լըսենք թէ Ն. Գերապատուութիւն այսուհետեւ Լուսինեան մականունը պիտի գործածէ․

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Աւասիկ թարգմանութիւնն այն բանախօսութեան զոր Յունաց Ամեն. Պատրիարքն՝ Տ. Դիոնէսիոս Ե՝ արտասանեց չորեքշաբթի օրն ի Մայր Եկեղեցի, յԱզգ. Պատրիարքարան այցելութենէն յետոյ․

Քրիստոսասէր Ժողովուրդ,

Բազում խօսքերու պէտք չունինք բացատրելու համար թէ ո՛րպիսի մեծ ուրախութեամբ ուրախացաւ մեր սիրտն երբ հասաւ ի լսելիս մեր կղերականաց և ժողովրդեան բացարձակ ընտրութեամբ և կայսերական բարձր հաճութեամբ Հայկական վաղեմի ու հին եկեղեցւոյն Պատրիարքական գահոյից Նորին գերաշնորհ Սրբազնութեան Ամենապատիւ Խորէն Աշըգեան Արքեպիսկոպոսին կոչուելոյն աւետիսն, որն որ իւր հռչակեալ իմաստութեամբն և օժտուած այլ և այլ նախանձելի ձիրքերովը՝ կարող է համապատասխանել իւր հոգեւոր հօտին և եկեղեցւոյն մաղթանաց ու ակնկալութեանց։

Փութացինք կանխաւ Նորին գերաշնորհ Սրբազնութեան թարգմանել մեր այս ուրախութիւնը զոր առաւել բացայայտ կը կացուցանենք մեր այս աւուր անձամբ ներկայութեամբ։ Ուրախակից լինելով նաեւ Քրիստոսասէր ժողովրդեան Հայկական Եկեղեցւոյն՝ համոզուած ենք թէ Նա, իրեն վայելուչ հոգեւոր առաջնորդի և հովուապետի արժանացած լինելով երախտագէտ հոգւով և սրտիւ պիտի փառաւորէ զամենակալն Աստուած որ իւր գերիմաստ նախախնամութեամբ ամենայն ինչ տնօրինելով՝ միշտ զօգտակարըն և զպիտանին կը յարուցանէ մեզ։

Այո՛, որդեա՛կք Քրիստոսասէր, ձեր դէմքերէն կը նշմարուի ձեր սրտերուն մէջ յորդող հոգեւոր ուրախութիւնն և բերկրութիւնն և շնորհակալութեան երախտագէտ զգացմունքն առ Բարձրեալն որ պարգեւեց ձեզ Հովիւ ըստ ձեր սրտի։ Այժմ, այս Մայրաքաղաքիս մէջ ձեր սուրբ եկեղեցւոյն գահը զարդարող Հովուապետն ընտիր առաքինութեան և կարողութեան տէր լինելով՝ և զՍուրբս Գրիգոր Լուսաւորիչն, զՍահակ, զՆերսէս Շնորհալին և այլք բազում Սուրբ Հարս, որք ժամանակ առ ժամանակ լուսաւորեցին և պայծառացուցին զՀայկական Եկեղեցին, ունի անտարակոյս որպէս յատակագիծ սոյն երեւելի և աստուածազգեաց Սուրբ հայրապետաց ընթացքն, և աստուածային շընորհօք առաջնորդեալ՝ առանց անոնց հետքերէն շեղելու, պիտի վարէ ամենայն յաջողակութեամբ զղեկն Եկեղեցւոյն ձեր. վասն որոյ և մեք 'ի սրտէ կը մաղթենք որպէս զի Նորին Ամենապատիւ Սրբազնութեան խոհեմ և իմաստուն հոգեւոր կառավարութեանը ներքեւ ձեր Սուրբ եկեղեցին յառաջադիմէ ընդ միշտ ի հաւատս առ Քրիստոս և ի վարդապետութիւն Առաքելական, և մեր սուրբ Եկեղեցեաց առնչութիւնքն, որք յոյժ վաղեմի ժամանակաց կը հասնին, մշակեալ և յառաջացեալ շարունակուին որ, ի լրումն ժամանակին, կարելի լինի մեզ, հաճութեամբ և շնորհօք Փրկչին մերոյ, ի մի բերան և ի մի սիրտ օրհնենք և փառաբանենք նորա ամենասուրբ և մեծավայել Անունն որոյ փառք յաւիտեանս․ Ամէն․

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՄԱՍԻՍ

40 փարայ

Մասիսի վաղուան Թիւը պիտի պարունակէ Ազգ․ տեսութիւն․ — ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ․ — Բանաստեղծութիւն մը․ —ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ․ — Պանդուխտին կեանքը․ —ՀՐԱՆԴ․ — Ս. կարապետի պատմութիւնը․ — ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ․ —Գրական կեանքը․ — ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ․ — Օրուան կեանքը․ — ՀՐԱԶԴԱՆ

Երէկ Ազգ․ Պատրիարքարանի մէջ կատարուեցաւ Մեծ․ Տօքթ․ Մինէճեան էֆ․ի նշանախօսութիւնն ընդ Օր․ Իսկուհի Պէգգալեանի, ի ներկայութեան երկուց կողմանց բարեկամաց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Սալիսէի աստիճան տրուեցաւ Հիճազի զօրաբաժնին բժիշկներէն և քաղաքային բժշկական վարժարանի շրջանաւարտ Մէհմէտ Էմին էֆէնտիի, Պրուսայի Նահանգին Թաղապետութեան բժիշկներէն՝ քաղաքային բժշկական վարժարանին շրջանաւարտ Տէրվիշ և Պետրոս էֆէնտիներու․

Երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ կայս․ Ֆէյզ-ի Բ․ չոգենաւին հրամանատար հազարապետ Իսմայիլ էֆէնտիի․

Հինգերորդ կարգի Մէճիտիէ՝ Ադրիանուպոլսոյ հրեայ համայնքութեան երեւելիներէն Խաիմ Պոտէ էֆէնտիի․

«ՍԵՐՎԷԹ» ԼՐԱԳԻՐԸ

Սերվէթ լրագիրն, որ երկուքուկէս ամսէ ի վեր դադարման դատապարտուած էր, բարձրագոյն Ներման արժանացած լինելով, երեկուընէ սկսաւ վերստին հրատարակուիլ․

Ի Բ. ԴՌՈՒՆ

Դատական բարենորոգմանց յանձնաժողովն երէկ ինիստ գումարեցաւ ի Բ. Դուռն և բանտերու ու բանտարկելոց մասին ինչ ինչ քննութիւններ կատարելով խորհրդակցեցաւ նաեւ բանտերու վիճակին բարւոքման խնդրոյն․

—Ներքին գործոց Նախարար Վսեմ. Մունիր փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովն երէկ ինիստ գումարեցաւ և զբաղեցաւ կիլոական կարեւոր խնդիրներով․

—Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարար Վսեմ. Զիհնի փաշա և Քաղաքապետ Մազհար փաշա երէկ Բ. Դուռը գնացին և յաջորդաբար տեսակցեցան Ներքին գործոց Վսեմ. Նախարարին հետ․

—Ամերիկեան դեսպան Պ. Շթրաուս երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. խորհրդականին հետ․

Բ. ԴՈՒՌՆ ԵՒ Պ. ՏԸ ՀԻՐՇ

Մտենեռ կ՚իմանայ թէ կայս. կառավարութեան և Արեւելեան երկաթուղեաց ընկերութեան միջեւ կեցած հաշուական ծանօթ խնդիրը կարգադրուելու վրայ է ջանիւք Պ. Կնէյսթի որ հինգերորդ իրաւարար կարգուած է․ Միւս կողմէ, շնորհիւ կայս. կառավարութեան ցոյց տուած հաշտարար ոգւոյն, երկու կողմէ ջանքեր կը լինին եղեր խնդիրը փոխանցմամբ մը կարգադրելու․

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Վիէննայէն կը գրեն դեկտ. 2 (Ն. Տ.) թուականաւ, թէ Քալտէրօն և Քօհէն վաճառատունն որ Արեւելից հետ արտածութեան գործեր կ՚ընէր, իւր վըճարումները դադրեցուցեր է 7000 ոսկւոյ բացով․

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Հայտար Փաշա—Նիկոմիդիոյ երկաթուղւոյն վարձակալք խնդրած են Բարձր. Մեծ—Եպարքոսէն որ տասն հինգ օրուան Նոր պայմանաժամ մ՚եւս տայ իրենց՝ յիշեալ գծին յանձնման համար, վասն զի Պ. Սիֆէլտէր իւր Լոնտոնի ընկերներուն խորհուրդ հարցունելու պէտք ունի եղեր․ Վարձակալք կը յուսան որ կայս. կառավարութիւնը պիտի հաճի նկատողութեան առնուլ իրենց սոյն խնդիրքը․

ՊՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՍԻՆՈԴ

Ըստ Նորագոյն տեղեկութեանց, Պուլկարաց էկզարքը Սոֆիա պիտի երթայ, Սինոդի գումարման նախագահելու, որպէս ծանուցուած էր յառաջագոյն․ Պուլկարիոյ տարեկան Սինոդն, ըստ սովորութեան, Զատկին պիտի գումարի ի Սոֆիա, արտօնութեամբ Գեր. Էկզարքին և Նախագահութեամբ տեղւոյն մետրապոլտին․ Մակեդոնիա կամ Թուրքիոյ ուրիշ մասանց մէջ բընակող ո՛չ մէկ պուլկար եպիսկոպոս չը պիտի մասնակցի այդ Ժողովին․

ՍԵԼԱՆԻԿԷՆ ԼՈՒՐԵՐ

Սելանիկի պաշտօնական լրագիրը՝ Քէօբրիւլիւէն իրեն հաղորդուած տեղեկութեանց հետեւելով, կըսէ թէ Ըսկիւպ Վրանիայի կառախմբին մեկնումն և ժամանումը աւելի կանոնաւորապէս տեղի կ՚ունենան այդ գծին շահագործումն Արեւելեան երկաթուղեաց ընկերութեան յանձնուելէն ի վեր․ Ցաւալի է միայն որ, կ՚ըսէ նոյն թերթը, երկու պետութեանց պատկանող անցագրական պաշտօնեայք դժուարութիւններ կը յարուցանեն որք կառախմբոյ ընթացքը կը կասեցունեն․ Ըստ յայտարարութեան ուղեւորաց, ասոնք պարտաւոր են 25ական ղըրուշի տուրք մը վճարել իրենց անցագրոց վաւերացման համար, սերպիական և օսմանեան հողերուն վրայ, ընդամենը 50 ղրուշ․ Պուլկարիա ուղեւորող անձինք կը վճարեն այդ 50 ղրուշն, և 15 ղրուշ ալ Պուլկարիոյ յատուկ անցագրի մը համար․ Սելանիկի պաշտօնական թերթն յոյս կը յայտնէ թէ իրաց այս վիճակը պիտի դարմանուի անյապաղ․

ՆԱՒԱՅԻՆ ԱՐԿԱԾ

Կուրճի ընկերութեան Բէլ-Մէրէյէր չոգենաւն որ ամսոյս 20ին առաւօտուն Սինոպէն մեկնած էր Կ. Պոլիս գալու համար, օսմանեան Տէֆէլ Պէհր չոգենաւուն բաղխելով, այս վերջինն ընկըմեր է․ Ընկղմեալ նաւուն նաւապետը, Մուսթաֆա Մէհմէտ և նաւաստիք ազատուելով, Մէրէյէր չոգենաւով Կ. Պոլիս եկած են․ Ընկղմեալ չոգենաւուն տէրը վնասուց հատուցում կը պահանջէ Կուրճի ընկերութենէն․

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ՄԵԾ ՊԱՐԳԵՒԸ

Հունկերը կ՚իմանայ թէ երկաթուղւոյ վերջին վիճակահանութեան մեծ պարգեւն՝ 600,000 ֆրանք՝ շահած է վերաքննիչ ատենի ընդհանուր դատախազի օգնականներէն Հագգը պէյ․

ԾՈՎՈՒ ՎՐԱՅ ՈՃԻՐ ՄԸ

Անցեալ ուրբաթ օսմանեան փոքր առագաստանաւ մը, որուն նաւապետն էր Շիլէցի Բարմագսըզ անուն անձը, դէպ ի բուլէյիրական ծովեզերք կ՚ուղեւորէր, 150 ոսկւոյ գումար մը տանելով որ յատկացուած էր ցորենի գնման․ Քարապուրնուի քացերը, Բարմագսըզի նաւն հալածուեցաւ Լազերու նաւու մը կողմէ որ մօտենալով անոր, լազերու պետն հարցուց թէ Բարմագսըզի նաւն ո՞ւր էր․ Բարմագսըզ վըտանգ մը գուշակելով, պատասխանեց թէ ոչ, թէ ինք Միտիացի ածխավաճառ մ՚էր և թէ Բարմագսըզի նաւն հեռուէն երեւցածն էր․ Լազերու նաւն սկսաւ անմիջապէս այդ կողմն ուղղուիլ․

Գարապուրնուի ազատարարաց կայարանէն թէեւ դիտած էին այս շարժումները, սակայն տեսնելով որ Լազերու նաւակը կը հեռանայ, ուշադրութիւն չէին դարձուցած, կարծելով որ տեղեկութիւն մը հարցուցած են և կամ ջուր խնդրած, ինչպէս կը պատահէր երբեմն․ Յաջորդ օրը, Լազերուն ցոյց տրուած չէքտիրմէին բեկորները գտնուեցան Քարապուրնուի քացերը․ Տովէզրին վրայ ևս երկու մարդոց դիակներ գտնուեցան, սոսկալի կերպիւ յօշոտեալ․ քիչ մ՚անդին ևս ուրիշ դիակ մը կար․

Լազերը՝ Բարմագսըզի կողմէ իրենց ցոյց տրուած նաւուն հասնելով, ըսած էին նաւապետին թէ 150 ոսկի ունի քովը և պահանջած էին որ իրենց յանձնէ զայն․ Նաւապետն իւր տրամադրութեան ներքեւ այդքան գումար մը չունենալով, վասն զի ածխավաճառ մ՚էր, մերժողական պատասխան տուած էր․ Ասոր վրայ լազերը նաւուն մէջ խուժելով, նաւապետը մորթած էին, ամեն ինչ կողոպտած և նաւն ալ ընկըղմել տուած․

ԱՐԳԻԼԵԱԼ ԼՐԱԳԻՐՔ

Յ՚Օտեսա հրատարակեալ Օտեսքի Վեսթնիք լրագրոյ հոկտ. 13ի թիւոյն ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ․

—Բարձրագոյն հրամանաւ, Բէյէ Բաբէյլէն ֆրանսերէն լրագրոյն ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ․

* * *

Երէկ մայրաքաղաքէս մեկնեցան Արչիպելագոսի կղզեաց նահանգին վերաքննիչ ատենի ընդհանուր դատախազ Խասան պէյ՝ ի Հալէպ, Պէյրութի կուսակալ Ալի փաշայի ամուսինն՝ ի Պէյրութ, Այտընի կուսակալ Բիզա փաշայի ամուսինն՝ ի Զմիւռնիա, Երուսաղեմայ Տէֆթէրը Խագանիի քննիչ Զէքի էֆէնտի՝ ի Պէյրութ և Հալէպի Բըժիի տօլէն Բէֆէթ պէյ յիւր պաշտօնատեղին․

—Պեստալեան Խորհրդոյ Նախնական դատարանին ընդհանուր դատախազ Ճէմալ պէյ շաբաթէ մը ի վեր հիւանդ լինելով իւր պաշտօնատեղին չի յաճախեր․

—Ե. զօրաբանակին հեծելազօրաց միրլիվա Սիւլէյման փաշա նոյն պաշտօնով Զ. զօրաբանակը փոխադրուած է․

—Ռուս դաշնակահարուհի Օլիտը Թիմանոֆ պատիւ ունեցեր է Վեհ. Սուլթանին ներկայութեան նուագելու, այն երեկոյին յորում կայս. Պալատան մէջ սեղան մը տըրուեցաւ ի պատիւ Պ. Նէլիտօֆի․

—Ոստիկանութիւնն երէկ Տրապիզոնի ճամբով հեռաւոր գաւառներ աքսորեց ութ չարագործներ․

—Բ. Դուռը վաւերացուցած է Եգիպտոսի Ֆրանսական Նորընտիր փոխ-հիւպատոս Պ. Պրինքլի պաշտօնը․

—Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան երկաթուղեաց վարչութեան տնօրէն Խայրի պէյ երէկ Զմիւռնիա ուղեւորեցաւ․ Այտընի երկաթուղւոյ ի Նորոյ շինուած 50 քիլոմեթր գծի ստացման և յանձնման գործողութիւնները կատարելու համար․

—Ազատարարի շքադրոշմ տրուեցաւ հեծելազօրաց ալայ տեղակալ Իպրահիմ էֆէնտիի ի վարձատրութիւն այն անձնուիրութեան որով ծովուն մէջ խեղդուող մարդ մը ազատած էր․

—Էնկիւրիի մէջ Թուրք կին մը երեք տղայ ծնած է, մին արու և երկուքն էգ․

—Անցեալ երկուշաբթի օր անծանօթ հայ տղայ մը, որ Ղալաթիոյ Եաղքափանի նաւամատոյցը կապուած ցռկանաւ մը մէջէն ձուկ կորսար, ծովը ինկաւ և աներեւոյթ եղաւ․

—Առջի գիշեր ի Բերա Բօսթա փողոցը ծագած հրդեհն սկսած է Պ. Սէզարօ Լոմպարտօյի բնակած տունէն որ իտալացի Պ. Պրինոյի սեպհականութիւնն էր․ Այրած հինգ փայտաշէն տուներէ երեքը 500 ոսկւոյ իսկ միոյն կարասին 400 ոսկիի ապահովագրեալ էին․ Ատէլէյտ անուն կին մը իւր տունը բռնկած պահուն բոլորովին չըտեսնելով իւր աղջկան հետ տան երկրորդ յարկէն վար նետուեցաւ եւ աղջկան մէկ ոտքը կոտրեցաւ․

—Սուրիոյ թերթին մէջ կը կարդանք թէ Հալէպի ոստիկանութիւնը Ալի անուն գերավաճառ մը ձերբակալած է որ Հիճազէն սեւամորթ գերիներ բերած էր վաճառելու համար․ Ոստիկանութիւնն ազատ արձակելով այդ գերիները, մարդահամարի վարչութենէն Օսմանէ թէզքէրէ տուած և յանձնած է այդ սեւամորթերուն․ Նոյնպէս հարկ եղած միջոցները ձեռք առած է նոցա ապրուստն ապահովելու համար․

—Սելանիկի լրագիրը կը ծանուցանէ թէ Վարտար գիւղէն Սելանիկ քաղաքը ջուր տանելու արտօնութիւն ստացող ընկերութեան գործակատարք սկսեր են արդէն բաժանորդագրութիւններ հաւաքել․

—Մայրաքաղաքիս օտարազգի ծանօթ բժիշկներէն Տօքթ. Քուզօվիչ մեռաւ առջի օրը․

ՏԱՔ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ահա ձմեռը վրայ կը հասնի իւր անխուսափելի ընկերակիցներով, անձրեւն ու ձիւնը, մէգն ու սառոյցը․ Դժնդակ օդերը կը յաջորդեն իրարու, հետեւելով աշնան որ այնչափ խիստ եղաւ մեզ համար․

Վայրկեանն եկած է ուր մսկոտները, փափուկ կուրծքի տէր անձերը, վերջապէս բոլոր անոնք որոց թոքերը առաւել կամ նուազ հիւանդ են, կը խորշին, ծիծեռնակներու օրինակին հետեւելով, դէպ ի Հարաւի արեւոտ երկիրները, Պէյրութ, Եգիպտոս, Եաֆա և այլն․

Իսկ թշուառներն որք հարկադրուած են մնալ մեր խոնաւ քաղաքներուն մէջ և անդ տանիլ ամբողջ ձմեռը, չ՚ունի՞ն միթէ Ժէռոտէլի Բաստիլներն, այսինքն Եգիպտոսի արեւը տուփի մը մէջ․ Ասիկայ նուազ բազմածախս է, եւ, ամեն հաշիւ ընելով, ձմրան վերջը, Եգիպտոսէ վերադարձողներն աւելի առողջ դէմք չունին քան Ժէռոտէլի յաճախորդները․ Ապաքէն, դէպ ի Հարաւ ճամբորդութեան մը տեղը կրնայ բռնել ուղեւորութիւն մը դէպ ի իւր դեղարանն եւ Պէյրութի ջերմ կլիմային տեղ՝ տուփ մը Ժէռոտէլի Բաստիլ․

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

Տիկին Սառա Պէռնառի երրորդ ներկայացումը տեղի կ՚ունենայ այս գիշեր․ Ներկայացուելիք խաղն է

ԼԱ ԹՕՍՔԱ

LA TOSCA

Վիքթօրիէն Սարտուի ընտիր թատերախաղն յորում Թօսքայի դերը պիտի կատարէ հռչակաւոր դերասանուհին․

⁂

Տիկին Սառա Պէռնառ երէկ Շուկան այցելեց և Պոլսոյ մի քանի նշանաւոր վայրերը շրջեցաւ․

ԱԶԴ

Ներկայիւս կը ծանուցուի Ուարրէն Հիւտըն մահը․ Իւր ժառանգութեան համար ո և է պահանջմունք ներկայացուելու են առ Ամերիկեան ընդհանուր հիւպատոսարանն 1889 յունվար 18էն առաջ․

Հրամանաւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց ընդհանուր հիւպատոսին

Կ. Պոլիս, 5 դեկտ. 1888 2270

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Թիւ 2, Մահմուտիէ փողոց
Քարաքէօյ, Կալաթա

Ստորագրեալքս պատիւ ունիմք ծանուցանել հասարակութեան թէ ամեն կարգի ապահովագրութիւններ կ՚ընդունիմք հրդեհի և ծովային վտանգաց դէմ, հրապարակի վրայ գտնուած առաջնակարգ ընկերութեանց հաշւոյն, չափաւոր գներով եւ ամենանպաստաւոր պայմաններով․ Նաեւ կը կարգադրեմք ի դէպս վնասու ամեն հաշիւներ որ կրնան յառաջ գալ ընկերութեանց և ապահովագրելոց միջեւ, որպէս ցարդ նոյն օրինակ բազմաթիւ փորձեր տուած ենք մեր յաճախորդաց։

ԱՆԻՔՏՈՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ
ՍԻՄՈՆ ՔԱՑՍԷՐԼԻԵԱՆ

ԱԶԴ

Լէյլանտի շոգենաւը մայրաքաղաքս կ՚սպասուի դեկտեմբեր 12ին․

ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆՏԷՆ
Գործակալ Լէյլանտեան շոգենաւային ընկերութեան

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Մատրիտ, 6 դեկտեմբեր

Բ. Դուռն ընդունած լինելով Պէննանս մարքիզին ընտրութիւնն իբր Սպանիոյ դեսպան ի Կ. Պոլիս, մարքիզն յառաջիկայ շաբթու պիտի մեկնի յիւր պաշտօնատեղին․

ԴՐԱՄԱԿԱՆ

Կալաթիա, 25 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

3 ամսուայ Լոնտրայի վրայ (պանքայի)	110
3 » » » (վճռելին)	109 3/8
3 » Բարիզի » (պանքայի)	23
3 » » » (վճռելին)	23 07 1/2

Դահեկան

Օսմանեան Քոնսոլիտէ

Երէկ երեկոյ դոց. (Մնաց. Օ. Սերի			16 17
Պօրսային գոցուելէն վերջը	»		16 18
Առաւօտուն բացուեցաւ	»	Գ. կ.	16 18
կէս օրին	»	»	16 18

ԻՄԹԻԱԶԸ ՏԱՒԻԼԻ

Երէկ երեկոյ		59
Այս առաւօտ	Գ. կ.	59 2
կէս օր	»	39 6

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

փոխառութիւն	A. Սերի	Գ. կ.	25 20
»	B. »	»	15 25
»	C. »	» 0.	16 18

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լր.		4 18
Կրէտի ժէնէրալ	Օսմ.	»	8 18
Պանք տը Փօնս	»	»	7 5
Օս. Շամոֆ է փոյէօր	»	»	4 30
Թրամուէյ	»	»	455
Ռումէլիի երկաթուղի	Ֆր.		47 1/4
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»		120

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	Ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 32
Անգլիական ոսկի	»	110 30
Իմփէրիալ	»	91 30
Քրիմիջ	»	51 20
Բուլկիլթ թղթադրամ	»	8 97
» արծաթ	»	75 20
[illegible] արծ. (տարբ.)	»	108 30
[illegible]	»	103 10
Հինգնոց	»	103 10
Պէշլիք	»	102
Աւֆիյէ	»	10 30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 6 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	96 5/8
Օսմ. » Սերի Դ. բացուեցաւ	14 7/8
» » » գոցուեցաւ	15
» » » Ա.	25 1/2
» » » Բ.	15 3/8
» » » Գ.	14 7/8
[illegible] 1871	81 3/4
Փոխառութիւն 1877	93 3/4
Պանք Օթօման	11 1/8
Ռուսական փոխառ. 1873	98 3/8
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	81 1/8
» առանձն. (Փրիվիլէժիէ)	100 1/2
Տայրա Սանիէ	77 1/8
Դոմէնիալ (փոխառ. Ռօչիլտ)	100
Հունգարական պարտաթուղթ 4 %	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 586

Վիէննա, 6 Դեկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	123
Օսմանեան երկաթուղի	22 20

Բարիզ, 6 Դեկտեմբեր ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	103 85
» » 3 %	83 17 1/2
Օսմանեան քոնսոլիտէ Սերի Դ. բացուեցաւ	15 12 1/2
» » » գոցուեցաւ	15 17 1/2
» » » Բ.	15 10
» » » Գ.	15 10
Օսմանեան երկաթուղի	46 75
» Լէժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթօման	531 25
Կրէտի Լիոնէ	607 50
» Ֆօնսիէ	1368 75
Բաժնետոմս Լիոնի	— —
Սուէզի ջրանցք	2210
Ռուսական 5 % 1877 ի	103 5/8
Իտալական Ռանթ	96 95
Սպանիական (արտաքին)	72
Եգիպտական միացեալ գ. բ.	411 25
Բրիօրիթէ Թիւրք	415
Հելլենական 5 %	420
Չէք Լոնտրայի վրայ	25 30

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 6 Դեկտ. ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 1/2 %	83 15
Օսմանեան քոնսոլիտէ	15 20
Եգիպտական	412 50

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱ

Լոնտոն, 6 դեկտեմբեր

Անգլիոյ Պանքային շաբաթական հաշուեկշիռը՝ նախորդ շաբթուան հաշուեկշռոյն հետ բաղդատմամբ՝ հետեւեալ տարբերութիւնները ցոյց կու տայ․

Պատրաստ մետաղադրամ—Նուազում—անգլ. ոսկի	176,000
Փոխանակագիրք և այլ թղթեր—յաւելում—անգլ. ոսկի	535,000
Պանքնոթք ի պահեստի—Նուազում—անգլ. ոսկի	536,000
Պահեստի դրամոց համեմատութիւնն յանձնառութեանց հետ	40 35 %

ԹՐԱՄՈՒԷՅԻՑ ԸՆԿ. Կ. ՊՈԼՍՈՅ

Վարչական խորհրդոյ որոշմամբ և Հիմնական Կանոնագրի 32, 33 և 35րդ յօդուածոց համաձայն, բաժնետերաց ընդհանուր ժողով մը արտասովոր կերպիւ ի նիստ հրաւիրեալ է երեքշաբթի, 29 Նոյեմբեր/11 դեկտեմբեր 1888, միջօրէի ժամ մէկին, ի կեդրոնատեղին Ընկերութեան, Սամթճըլար խան, Բէրչէմպէ Բազար, Ղալաթիա։

Տասն բաժին ունեցող արժէտերք, որք կը փափաքին ներկայ գտնուիլ այս ժողովոյն, պարտին գումարումէն տասն օր առաջ իրենց բաժնեթուղթերն յանձնել ի Սնտուկն Ընկերութեան, իսկ օտարաբնակ բաժնետերք, առ Պ. Պ. Ժ. Գամոնտօ և ընկ. ի Բարիզ, 31, Լաֆայէտ փողոց (37րդ յօդուած Հիմնական կանոնագրի։)

Օրակարգն, որուն վրայ պիտի խորհրդակցի արտասովոր ժողովն, է հետեւեալն․

Ետ առնուլ արդի Բաժիններն եւ անոնց տեղ դնել նոր Բաժիններ․

Կ. Պոլիս, 28/9 Նոյեմբեր 1888
3—3 ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեր երկրին սահմանակից Վրաստանի կամ Վրաց անուան նշանակութեան նկատմամբ ոչինչ ունիմք տեսանել առ հայ պատմագիրս, որք թէեւ նկարագրած են այդ երկիրն, այլ Վիրք՝ Վրաց ազգ, Վրաստան անուան ստուգաբանութիւնն ցոյց տուած չեն, և անտի ցայսր ոչ ոք ի մեր բանասիրաց կարծեմք պարապած է այդ անուան գաղտնիքն լուծելու առ մեզ․ Հարկ չէ երկարապատում լինել Վրաստանի նկարագրութեան մասին․ միայն մեր ի ստորեւ ցոյց տուած ստուգաբանութեան յարակից եղող երկրին գլխաւոր նիւթական յատկութիւնն պիտի յիշեցնեմք․ Գիտեմք որ Վրաստան ընդարձակ դաշտավայրեր կ՚ներկայացնէ մեզ ուր կ՚արածին մեծամեծ և համբաւաւոր հօրաններ․ Քաղաքականապէս Վրաստան չէ կատարած ի հնումն նշանաւոր դեր մը յընդհանուր պատմութեան․ Լատինացիք խաչակրութեանց ժամանակ միայն տեղեկացան զայնմանէ․ Վրաստան կանխաւ ծանօթ էր Յունաց որք այդ երկիրն ի քրիստոնէութեան հաւատս դարձուցանելոյ համար անշուշտ առաքելութիւններ կազմած էին, յորս կը

Թուի գլխաւորն լինել Ս. Գէորգ Կապադովկացի հռչակաւորն, քանզի Վրաստանի բնիկ ժողովրդեան մէջ հաստատուն քրիստոնէական մը թողած էր, եւ Լատինք յեցեալ այդ քրիստոնէականին վերայ կարծեցին թէ երկիրն Ս. Գէորգայ անուամբ կոչուած էր Géorgie. Սակայն յառաջ քան զլատինս Յոյնք արդէն այդ անուամբ կը ճանաչէին զ՚ն երկիրն զոր մեր Նախնիք կոչած են ՎԻՐՔ, ՎՐԱՍՏԱՆ, ՎՐԱՑ ազգ. Վրացիք երկրագործ ժողովուրդ մ՚էին, և ըստ այսմ իրենց երկիրն օժտեալ էր պարարտ մարգագետնօք և դաշտավայրօք. Ուստի կը թուի մեզ թէ որքան յանդուգն չպիտի լինիմք, երբ Վիրք, Վրաստան յորջորջման ստուգաբանութիւնը կը ներկայացնեմք աստանօր, կարծելով թէ մեր Նախնիք եւս ըստ օրինակի Յունաց՝ որ Géorgie կոչեցին այդ երկիրը, բնակչաց երկրագործութեան պարապելուն համար, ինչպէս կ՚ըսէ անգղիացի Կիպպըն աշխարհահռչակ պատմագիրն, մեր Նախնիք եւս կ՚ըսեմք հայացուցին այդ géorgie բառն և փոխեցին ի Վրաստան կամ ի Վիրք (Թերեւս վայրք, [illegible], [illegible], զի [illegible] բառը կը նշանակէ եւս տեղի ուր լինի վար և հունձ), որպէս թէ ըսած լինէին Վայրաստան, Վարաստան կամ Վայրք.

Նոյն յունական բառին աղաւաղումն է նաեւ Ռուսաց այժմեան նոյն երկրին համար գործածած Կէօրջ եւ Տաճկաց Կիւրճիստան անունները.

Այս մեկնութիւնը խոնարհաբար կը ներկայացնեմք առաջի հայ բանասիրաց, խնդրելով և նոցա կարծիքն այս մասին.

ԵՐ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

15 Նոյեմբեր 1888

Պարտիզակ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԻ ԵՒՍ
ԱՌ
ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Արեւելքի պատուարժան ընթերցօղք կը յիշեն անշուշտ մեր կարճառօտ պատասխանին որ հրատարակուեցաւ Թերթին 1410 օրաթուոյն՝ ան քանի մի դիտողութեանց ի հերքումն, որք Ամսօրեայ պատուական հանդիսի սեպտեմբեր ամսաթուոյն մէջ հրատարակուած էին, խմբագրութեամբ Արժ. Գ. Մ. Հօր, մեր ճաշակի նկատմամբ. Արդ, Հանդիսին նոյեմբեր ամսաթուով հատուած մի եւս յօժարեցաւ հրատարակել Հ. Գ. Մ. ի պատասխանի մեր նոյն պատասխանատուութեան՝ լի հմտութեամբ և ազնիւ ոճով.

Գոհութիւն յայտնել կը փութամք նախ՝ ան լաւագոյն համաձայնութեան մասին զոր գոյացեալ կը համարիմք, — ոչ անշուշտ յանդէպս, — վասն ինչ ինչ դիտողութեանց զոր ի մէջ բերած էր Մեծարոյ Հայրն, համաձայնութիւն՝ զոր հարկաւ զգացած են հետաքրքիր բանասէրք. կան սակայն տակաւին երկու կէտեր, տարերք անմիաբան կարծեաց, որոց ի բարձումն ջանամք զայս նուազ փորձ մի եւս ընել.

Ա.—[illegible], [illegible]. Ահա երկու բարդութիւնք, զորոց չեմք համակարծիք ըստ Արժ. Հատուածագրին՝ այդ երկու անուանք կը նշանակեն [illegible], կամ շատ դժուարութեամբ՝ [illegible], և ըստ մեզ կը նշանակեն, շատ դիւրութեամբ, [illegible] ([illegible]) [illegible]. Առ ո՞ արդեօք դիմել պարտիմք յընդունելութիւն կամ ի մերժումն Արժ. Հօր կարծեաց, եթէ ոչ առ Նախնի ընտիր մատենագիրս, որ Հայերէն «դասական լեզուի ոգին» կ՚ուսուցանեն մեզ անժխտական հեղինակութեամբ.

Ի՞նչ կը նշանակէ հայերէն [illegible], նաեւ եղակի.—Դիմելով դասական աւագ մատենին, Ս. Գրոց, կը տեսնեմք թէ [illegible], առանձինն եւ եղակի, կը նշանակէ նաեւ [illegible], [illegible]. Ահա օրինակ հանդերձ յունարէն բնագրաւ. «Այս է [illegible] արարածոց երկնի եւ երկրի». — [illegible] Ծն. Բ. 2.— «Այս է [illegible] արարածոց մարդկան».—[illegible]. Ծն. Ե. 1.—«Վասն այնորիկ ասի ի [illegible]». — [illegible]. Թիւ. ԻԱ. 14. Նոյնպէս՝ Գիր օրինացս այսոցիկ. Գիր ուխտի, և այլն. Յունարէն նաեւ [illegible] ի հայ թարգմանուած է [illegible]. «Ո՞չ գիտէք յեղիա զի՞նչ ասէ գիր».— [illegible]. Թղթ. Պաւ. առ Հռով. ԺԱ. 2.

Ստոյգ է թէ աւելի յաճախ գործածութիւն ունի յոգնակի [illegible]. բայց հարկ է յիշել տարրական կանոնն հայ բարդութեանց մէջ՝ թէ [illegible] (+) [illegible]. օրինակք հազարաւոր են. Փոխանակ ըսելու [illegible], [illegible], օրինաց, առանց երբեք խղճելոյ կարող եմք նոյն կանոնաւ զօդել՝ [illegible] — +, [illegible] — +, [illegible] — +, այլովքն հանդերձ. Ուստի, թէպէտ «ոսկի դարու գրչին անծանօթ,» այլ «ոգւոյն» չէ անծանօթ և է ըստ ամենայնի համաձայն՝ յիշեալ անուանց բարդութիւնն, ընդ որ ոչ ոք յոսկեդարեան «մատենագիտաց» դժուարահաճ կը լինի կարծեմք. Ընդհակառակն, է դարձեալ՝ թէ այս և այսպիսի օրինական ճաշակաւոր բարդութեամբք, որ անհրաժեշտ են ի պէտս նորանոր գաղափարաց և ընդհանրապէս՝ լեզուին բազմակողմանի յառաջադէմ զարգացմանց, երբեք ակնարկեալ «չափաւոր ազատութիւնն» չարաչար գործածած նշմք լինիր, և հին լեզուին ամբողջութեան վրայ կարի «զգուշաւոր» յաւելուած մ՚ըրած կը լինիմք միայն, զոր «դասական կանոնաւոր լեզուի աշակերտ մը», թէ լինի չափաւոր խստապահանջ, չպիտի կարէ խոտել իբրեւ խորթ և անհարազատ.—

Գէշ անուան զանազան բարդութեանց վրայ հմտաբար խօսած պահուն՝ յանկարծ ուրեք զարմանք կը յայտնէ Հ. Գ. Մ. որ մեք [illegible] բառին [illegible] ([illegible]) [illegible] իմաստը տուած եմք. Եթէ զարմանալն այսչափ աժան է, մեք ընդէ՞ր չփութամք զարմանալ Արժ. Հօր զարմանաց վրայ. Սակայն, բաց ի մեր պատուական ընդդիմախօսէն, կարծեմք թէ ամէն ոք ի միտ առած է մեր [illegible] համառօտ (ի հարկէ) բացատրութեան նշանակութիւնն, այսինքն թէ [illegible], տաճկերէն՝ [illegible], [illegible]. Ահա [illegible] բառին ի մեր կուսէ տրուած իմաստ, զոր այլ ազգ ըմբռնած է Հատուածագիրն, որպէս կ՚երեւի իւր զարմանքէն. Իրաւ է թէ, ինչպէս խիստ լաւ կը բացատրէ Արժ. Հայրն, բայց հանդերձ [illegible] ([illegible]) կը նշանակէ «ժողովուրդն համրելու գործողութիւնն», և կամ «ազգի մ՚անհատից անուանքը գրի անցնելն». բայց [illegible] առանձինն կը նշանակէ նաեւ ինչ որ նշանակեցինք ի վեր անդ, յունարէն՝ [illegible]. օրինակ. «Եւ երթային ամենեքեան [illegible] յիւրաքանչիւր քաղաքի».—[illegible] (բացցեալ) [illegible].—«Ել և Յովսէփ . . . ի Հրէաստան . . . [illegible] Մարեմաւ հանդերձ».— [illegible] (Նոյնպէս) [illegible] Ղկ. Բ. 3—5. Այս օրինակաց մէջ [illegible] առանձինն կը նշանակէ [illegible], և ոչ համրելու գործողութիւն որ տեղի չունի աստ. «Մտանել յաշխարհագիր» կը նշանակէ [illegible], գաղղիերէն՝ Etre enregistré, տաճկերէն՝ [illegible]. (1)—

Ի չարս դիտողութեանց Հատուածագրին՝ անակնկալ թուեցաւ մեզ [illegible] բառին տրուած մեկնութիւնն. «[illegible] . . .» կ՚ըսէ, «կը ցուցընէ կոթող կամ քարը, որուն վրայ խօսք . . . մը կայ.» Այս մեկնութեամբ կ՚իմացուի թէ յիշեալ բառին կազմութեան մէջ գլխաւոր գաղափարը ցոյց տուողն է [illegible] քան թէ [illegible]. բայց ընդհակառակն [illegible] ըսելով կ՚իմանանք գլխաւորաբար [illegible] որ փորուած է [illegible] (կոթող կամ քար) վրայ, և երկրորդաբար՝ [illegible] յորում դրոշմուած է [illegible]. Երկու իմաստից մէջ խտրութիւն կայ, զոր դիւրին է ի միտ առնուլ. Եթէ [illegible] և [illegible], յուն. [illegible] և [illegible], անխտիր գործածուէին նոյն և մի գաղափարի համար, յայնժամ միայն կարելի էր ընդունիլ՝ թէ այդ բարդ բառին մէջ գլխաւոր գաղափարըն յայտնողն է [illegible] և ոչ [illegible]. բայց յայտ է թէ այդպիսի գործածութիւն մը չեմք գտնէր ի գրի. «Առեալ Յակոբայ վէմ՝ կանգնեաց արձան». «Ամենայն իբրեւ յարձանագրի հաստատեալ է ճշմարտութեամբ.» Այս երկու օրինակաց մէջ յստակ իմն կ՚երեւի երկու անուանց նշանակութեան տարբերութիւնն, և մանաւանդ՝ երկրորդին մէջ բարդ անուան գլխաւոր գաղափարին ցուցիչն, որ է [illegible]. (2)—

Բ.— [illegible]. Ահա Արժ. Հատուածագրին և մեր մէջ եղած անհամաձայնութեան միացորդն. Հազիւ թէ սակայն կը [illegible] կրկնելու՝ թէ այդ ասացուածն չէ երբեք հակառակ դասական լեզուի ոգւոյն, չէ բնաւ ընդդէմ Ոսկեդարու բնականին, և ոչ իսկ անպատշաճ՝ անխառն մատենագրութեան ճաշակին. Ըստ բաւականին խօսած էինք այդ ոճոյն դէմ յարուցեալ առարկութեանց նկատմամբ՝ քանի մի ընծայութիւն բերելով ի յայտ, զոր չտեսանք ջրեալ ի մեր պատուական ընդդիմախօսին վերջին պատասխանատուութեան մէջ.

Խոնարհ

[illegible] Ոսկեդէն Դպրութեան

Յ. ԳՈՒՐԴԻՆ

---

(1) Հայկազեան բառարանն այսպէս կը մեկնէ [illegible]... «Գրութիւն և Գըրուած համաշխարհական ի գլուխ արքունի. քննութիւն, թիւ համարոյ մարդկան անցեալ ի գիր. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible].»

Եւ Առձեռն բառարանն (Բ. տպագ.) կը մեկնէ . . . «Մարդկան ցանկը՝ տեղով անունով գրած. Տ գրյտ, թէֆթիշ, քիւթիւկ, տէֆթէր.»

Այս վերջինն չի յիշեր բնաւ նոյն անուան հանդերձ բայիւ գործածութիւնն, որ շատ սովորական է. Նոյնպէս չէ դրած թէ [illegible] առանձինն կը նշանակէ դարձեալ [illegible], որ նոյնչափ սովորական է. ըստ այսմ կը կարդամք (Գծ. Ե. 37) «Յարեաւ Յուդաս գալիլեացի յաւուրս աշխարհագրին,» ուր յայտնի է թէ նիւթը (ցանկը) չի նշանակեր «աշխարհագիր».

(2) Դիտել հարկ է թէ այն գրիչք որ [illegible] չզգացին յետադասութիւնն՝ իբրեւ ցանկալի գործածութիւն առ ընտիր նախնիս՝ չյաճախեալ կը պատուիրէ, չի դժկամակիր ի վկայութիւն կոչելու ոչ-ոսկեդարեան գրուածներէ, Խորենացւոյ Պատմութենէն և Ոսկ. Յով. Մեկ. ԺԹ. ճառէն, «մանաւանդ [illegible]».

ԿՐԻՑ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ
ՄԱՐՄՆՈՅ ՅՕՐԻՆՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մարդկային ուղեղը պատրաստ է միշտ տարբեր և նոր գաղափարներ ստանալ. սակայն ուղղոյ ստացած այս գաղափարները յիշողութեամբ ըմբռնելով, բաղդատութեամբ դատելով և երեւակայութեամբ մեծնալով, միտքը կատարեալ անտարբերութեան մէջ կրնան պահել՝ և ասկէ յառաջ եկած հանդարտութիւնն անտարակոյս մարդուս համար երջանկութիւն մ՚է. Ստոյիկեան վաղեմի փիլիսոփաներէն ոմանք իսկ յուզմանց այս բացակայութիւնը իբրեւ գլուխ բարեաց նկատած են. Բայց ընդհանրապէս մեր զգացումները այս վիճակին մէջ չի մնալով անկէ շատ աւելի կը հեռանանք.

Կիրքերը բժշկական տեսակէտով կրնանք երկուքի բաժնել, որովհետեւ հոգւոյն մեծ յուզմունքները ախորժելի կամ տաժանելի են, և այս ընդհանուր յատկութիւնները ունենալուն համեմատութեամբ յօրինուածութեան մէջ բոլորովին տարբեր արդիւնքներ յառաջ կը բերեն. Ուրիշ բաժանում մը եւս ընդունուած է որ կրից մասնաւորապէս արեան շրջանի ունեցած ազդեցութեանց վրայ հիմնուած է, այսինքն այն ամէն կիրք որ յօրինուածութեան մէջ արիւնը կեդրոնէն դէպ ի մորթը կը բերեն՝ ընդլայնիչ կիրք, իսկ անոնք որ այս հեղուկը ներքին մասերը կը մղեն՝ ճնշիչ կիրք կը կոչուին. զոր օրինակ ուրախութիւնը, երջանկութիւնը, ուժգին և ախորժելի յուզմունքները արեան շրջանը կը փութացնեն, սիրտը պարունակած արիւնը արագ կերպիւ կը մղէ և մորթը կը գունաւորի. իսկ տխուր կիրքերը ինչպէս դիմադարձեալ սէրը, նախանձութիւնը՝ արեան շրջանը կը ծանրացնեն, ընդհանուր տկարութեան և մորթի գունատութեան տեղի կուտան, և այս վերջինը սրտի զօրութեան տկարանալը կը յայտնէ. գիտելի է որ ընդլայնիչ կիրքերը ճնշիչ կիրքերէն աւելի նպաստաւոր են յօրինուածութեան.

Ուղղոյ վրայ կրից ազդեցութիւնը. — Բարոյական պատճառները ուղղոյ վրայ զգալի կերպիւ կ՚ազդեն, բուռն և յանկարծական ազդեցութիւն մի մէկ վայրկենի մէջ իսկ կարող է ամենազօրեղ մարդն սպաննել առանց նշմարելի վնասուած դէտ մի յուղեղին զգալի ներգործութեան մէջ. օրինակի աղագաւ վերջին ծայր մեծ երկիւղ մի այնպիսի ջղային ցնցում մի յառաջ կը բերէ որ յանկարծարար մահացու կրնայ լինել.

Աւելի փոքր աստիճանաւ այսպիսի պատճառները նուազ զօրաւոր ազդեցութիւններ յառաջ կը բերեն, ինչպէս բարկութիւնը, երկիւղը յաճախ հետեւանք ունեցած են ուղղոյ քիչ շատ ծանր համախռնումներ և արիւնահոսութիւնք որք անդամալուծութիւն կը պատճառեն մանաւանդ ծերացեալ անձանց քով որոնց շնչերակները կարծրացած և առաձգութիւնը կորուսած լինելով, համախռնման պատճառաւ դիւրութեամբ կը ճաքին և ուղղոյ արիւնահոսութիւն յառաջ բերելով անդամալուծութեան պատճառ կ՚ըլլան. Անչափ ուրախութիւն մի եւս իւր վտանգներն ունի և բոլոր ամենազօրաւոր ընդլայնիչ շարժումները նոյն անկարգութեանց տեղի կուտան.

Սիրոյ յանկարծական պատահմանց մեծագոյն մասը ուղղոյ պաշտօնին կամ ախտակցական հակազդեցութեան (réaction sympathique) կը վերագրուի, որք միւս գործարանաց մեծամասնութեան վրայ կ՚ազդեն. այս կիրքը չափազանց ուրախութեան, մեծ նեղութեանց, նախանձութեան, դժկամակութեան կցեալ ամեն անպատեհութիւնները կը պատճառէ և այս ամէն պարագայից մէջ ուղեղը և սիրտը մանաւանդ այն առաջին և ազդուարեր ազդեցութիւնը կը կրեն.

Եթէ այլոց սէրը այս ազդեցութիւնն ունի՝ անձին սէրն ալ նոյնն ունի իրեն համար, եւ ամէն ինքնասիրական կիրքերը (passion égoïste). ինչպէս ագահութիւնը, հպարտութիւնը, փառասիրութիւնը՝ ջղային դրութեան և իւր գլխաւոր գործարանաց մէջ բազմաթիւ անկարգութեանց պատճառ կը լինին. չը մոռնանք ըսելու թէ անձնասպանութեան մեծագոյն մասը բարոյական ազդեցութեանց մասնաւորապէս ուղղոյ վրայ ներգործութեան վերջն կը սպառի, և ճնշիչ, ընդլայնիչ կրից պատճառած մեծ անկարգութեանց շատերը մի և նոյն կերպ ազդեցութեան կը վերաբերին.

Կրից արեան շրջանի վրայ ունեցած ազդեցութիւնը.—Ուղղոյ և սրտի միջեւ այն աստիճան ախտակցական յարաբերութիւն կայ որ այս գործարանաց միոյն վրայ ազդող կիրքը միւսին վրայ վերստին կ՚ազդէ, և մի եւ նոյն ժամանակ յօրինուածութեան գլխաւոր պաշտօնից մէջ մեծ խռովութիւն կը պատճառէ. ամեն մեծ ուրախութիւնք մեծ ցաւոց պէս սիրտը կը զարնեն ինչպէս որ առ հասարակ կը զրուցուի. ճիշդը խօսելով առաջին ցնցումը սրտային մասին մէջ կ՚զգացուի և այս կէտն է ուր միտացող անձը իւր ձեռքը կը տանի. յաճախ այս ցաւը այն աստիճան սաստիկ է որ յանկարծակի մահը նորա արդիւնքը կրնայ լինել, բայց խնդիրը խիստ քիչ անգամ այս վիճակին հասնելով, այսպիսի պատահմանց հետեւանք միայն սրտի զանազան հիւանդութիւնները լինելը կը տեսնենք.

Կրից շնչառութեան վրայ ունեցած ազդեցութիւնը. — Շնչառական գործարաններն մէջ առանձնական երեւոյթներ հաստատելու տեղիք չունի, ի [illegible] ինչպէս անհանգիստ լուրէ մը և անոր մի ուրախութենէ մի վերջը յառաջ եկած մի քանի յանկարծական դժուարաշնչութիւնք. Ուղղոյ և սիրտը թոքերուն հետ սերտ յարաբերութիւններ ունենալով այս երկու առաջին գործարանաց մէջ տեղի ունեցած խռովութիւնը վերջնոյս վրայ վերստին կ՚ազդեն. Մեծ երկիւղ, բարկութենէ մի, [illegible] վերջը երբեմն մահաբեր թոքային արիւնահոսութիւնք տեսնուած են, նոյնպէս են նաեւ թոքախտի տրամադրութիւն ունեցող անձանց քով մերձաւորութեան յաճախակի չափազանցութենէ յառաջ եկած շնչառական դրգռումները.

Կից մարսողական գործարանաց վրայ ունեցած ազդեցութիւնը. — Յուզմանց ազդեցութեան ներքեւ, ստամոքսը իւր պարունակած կերակուրները կ՚արտաքսէ կամ իւր պաշտօնը չի կատարելով կատարեալ անմարսողութիւն կը պատճառէ. շատ անգամ ստամոքսի այս խանգարումը յանկարծ երեւան չ՚ելներ, բայց երթալով այս գործարանը նախ թեթեւապէս և ապա զգալի կերպիւ կը վնասուի և վերջապէս բոլորովին կ՚այլայլի. Յաճախ փորհարութիւնք մեծ երկիւղի կամ ամէն ուժգին և անհամոյ յուզմանց հետեւանքն է, և առաջին անգամ պատերազմի մէջ ներկայ գտնուող զինուորականք յաճախ այս եղական ազդեցութիւնը կը կրեն.

Մէկ վայրկեան ալ լեարդը և միզամանը նկատողութեան առնենք և տեսնենք թէ կրից մէջ այս գործարանները ի՞նչ դեր կը խաղան. — Յանկարծական երկիւղ մը, սաստիկ բարկութենէ մը վերջը յաճախ քիչ շատ ծանր դալուկ (ictère) մը տեղի ունենալը կը տեսնենք, և լեարդի զանազան հիւանդութեանց մեծագոյն մասը՝ կարող է այս մեծ յուզմանց ազդեցութեան արդիւնքը լինել. Մեծ երկիւղէ մի վերջը միզամանը յանկարծ պարունակած մէզը կը վանէ. բայց ճիշդը խօսելով երիկամունքն ալ խիստ արագ կերպիւ մեծ քանակութեամբ մէզ կ՚անջատեն և այսպիսի պարագայի մէջ մորթը չ՚արտաշնչեր, արեան շրջանը կեդրոնացեալ է և միզական գործարանը՝ յօրինուածութեան կատարել պարտաւորած կորստեանց մէջ, միւս պաշտօնից տեղը կը բռնէ.

Ուրիշ գեղձեր (glande) ալ կրից ազդեցութեան ներքեւ կը գտնուին, ինչպէս ամէն մարդ գիտէ որ եթէ բարոյական տխուր պատճառ մի ուղղոյ վրայ ազդէ, իսկոյն արտասուագեղձք (glandes lacrzmales) առատապէս կ՚անջատեն. Նոյն երեւոյթը խիստ քիչ անգամ և աւելի թեթեւ կերպիւ անչափ ուրախութենէ մի վերջը տեղի կ՚ունենայ մանաւանդ կանանց քով որք դիւրագրգիռ և միանգամայն փափուկ էակներ են, և ճիշդ խօսելով այն միջոցին խնդալը լալու կը վերածուի.

Բարկութիւնը բերանը կը ցամքեցնէ և կամ ընդ հակառակը զանի փրփրաւոր թուքով կը լեցնէ այնպէս որ բերանն ու շրթունքները խիստ սարսափելի ձեւ մը կ՚առնան.

Դիեցող կանանց քով կաթին անջատումը շարունակ ամէն ուժգին բարոյական ճնշմանց ազդեցութեան ներքեւ է. Ցիրաւի այսպիսի ազդեցութեանց ներքեւ այս հեղուկը աղետալի յատկութիւններ կ՚առնանայ, և դիեցիկ մանկան ծանր անհանգստութիւններ կը պատճառէ, ուրեմն ո՛րչափ կարեւոր է սանոց մայրերը և դայեակները փոքր ինչ ուժգին կրից ազդեցութենէն իսկ զերծ պահել, որովհետեւ կիրքերը այս հեղուկը կ՚այլայլեն եւ կամ նորա անջատումը կը դադրեցնեն.

Առողջապահական օրէնքներ.

Կիրքերը չափաւորելու արհեստը բժշկականութեան ամենակարեւոր կէտերէն մին է, որովհետեւ յաճախ այնպիսի դէպքեր կը պատահին որ կիրքերը առանց անհետացնելու կամ չափաւորելու անկարելի է ուրիշ միջոցներու դիմելով այս անպատեհութեանց առաջքն առնուլ. Պատուէրները և օրինակները խստիւ հակառակ չի վարող անձերն կը բարուքեն, և այս մասին բարոյական կրթութիւնը կրնայ երջանկաւէտ արդիւնքներ ունենալ. Աւելի վերջը հետեւեալ միջոցները կարող են յօրինուածութիւնը բարուքել. Ջերմ կամ ցուրտ տեղ մը կենալը գործարանները կը կերպափոխէ, մարմնամարզութիւնը, յոգնութիւնը, տըկարացուցիչ կերակուրները մի քանի գործարանաց զօրութիւնը կրնան չափաւորել, և մարդ մը այս կերպով կրթուելով, ուսանելով, սնանելով, հագուելով, անձանց մեծամասնութեան լաւ յարմարող այս միջին վիճակին կը հասնի.

Մարդս որ յաճախ իւր կրից խաղալիկ է, հակառակ կրից հակառակ ազդեցութենէն օգուտ քաղելով կարող է կատարելապէս իւր առողջութիւնը գտնել, մանաւանդ եթէ անզգայութիւնը՝ շատ ուժգին յուզմունքներէ անդրադառնալ յօրինուածութիւն մը կարենցնել կ՚ուզանայ. օրինակի աղագաւ, ուրախութիւնը և տխրութիւնը հակառակ կիրքեր են որք յօրինուածութեան վրայ հակառակ կերպիւ կ՚ազդեն այսինքն մին փրկաւէտ իսկ միւսը տագնապաբեր. հետեւաբար այս առաջինը վերջնոյն յաջորդելով հաւասարակշռութիւնը կը վերահաստատուի. այս մասին վերայ եղող կենսականութեան մի քանի հարուածներ տալով նա կերպով մը կը վերակենդանանայ և նոր ազդեցութիւնները կը լեն այն անձանց մաղը որք այլ եւս չի պիտի հաշուէին ընկերական աշխարհին մէջ. Փորձառական բժշկութեան ամենադժուար կէտերէն մին այս է, և բարեխամ բժիշկ մը միայն կարող է յաջողիլ այն ճանբուն մէջ ուր մարդկային սիրտը մեր ամեն ներքին կրից խորերուն մէջ կորսուիլ կը ջանայ.

ՏՐ. ՕՆՆԻԿ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԻՆԱՍ ԳԱԶԱՄԱՃԵԱՆ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Գին 2 ղրշ.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
(Արամեան)

Կը պարունակէ պատմութեան գլխաւոր դէպքերն ու անցքերն իրենց յարակից մասերովը. երկրին բաժանումները, կլիման և արտադրութիւններն. Հայաստանի հնախօսութեան վերաբերեալ համառօտ տեղեկութիւններ. Հայոց հին կրօնքը. Հայաստանի ժամանակները, կաթողիկոսունք. Պատրիարքունք եւ ժամանակից պատմութիւններ մինչեւ մեր օրերը կը հասնի. ոճն է կոկիկ եւ դիւրըմբռնելի մանաւանդ տղայոց համար,—Կիսակազմ, երես 150.

2268 1—5

ՃԱՇԱԿ
ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ԾԱՂԿԱՔԱՂ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ
Հանդերձ կենսագրական, Պատմական, Դիցաբանական եւ Աշխարհագրական ծանօթութեամբք
Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՓՈՓՈԽԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ
Աշխատասիրութեամբ՝ Ա. ՊՕՊՈՒՃԵԱՆԻ

Սոյն օգտակար հատընտրին Գ. տպագրութիւնն հրատարակուեցաւ և կը ծախուի ամեն գրավաճառաց քով.

Գինն է Ա. Մասն — 5 ղրշ.
Բ. » — 7 »
Երկուքը միասին — 12 »
» » Լաթակազմ 15 »
Դպրոցներու մեծ զեղչ կը տրուի.

2205 8—10

ՄԻԱԿ ՃՇՄԱՐԻՏ ՀԻՒԹ
LIEBIG
ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Ի ՖՐԷՅ-ԲԵՆՏՈՍ

Որ 1867էն ի վեր արժանացած է Միջազգային ամեն ցուցահանդէսներու մէջ ամենէն բարձրագոյն վարձատրութեանց. Մեծ դիւրութիւն և խնայողութիւն Վայրկենական պատրաստութիւն արգանակի, և ապուրի, համեմի, [illegible] համը բարեխառնելու գերընտիր միջոց.

Հիւանդաց և տկարներաց համար կազդուրիչ դեղ.

Պահանջել այս ստորագրութիւնը Liebig կապոյտ մելանով.

2141

Մեծաքանակ կը ծախուի գործակատարաց քով, ՆԷՆՆԻ ԲՕԼԼԷ և ընկ. Կ. Պոլիս, Թիճարէթ խան, թիւ 4. կը ծախուի նաեւ ուտելեաց վաճառականներու, դեղավաճառաց, նպարավաճառներու քով և այլն.

ԼՈՒԾՈՂՈՒԹԻՒՆՔ, ԹԱՆՉՔ

ԱԲԷՐԻԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐՆ այսօր ճանչցուած են գերազանց դարման մը ընդդէմ լուծողութեանց, փորքշուքի, թանչքի, արիւնեռթութեանց և այլն.

ԱԲԷՐԻԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐՆ ընդունուած են նշանաւոր բժիշկներէ մայրաքաղաքիս և օտար երկրաց մէջ և կը գործածուին շատ հիւանդանոցներ.

Աբէրիի դեղահատներուն Ֆօրմիւլն յանձնուած է Բարիզի բժշկական Ակադեմիային և Թուրքիոյ քաղաքային բըժշկական խորհրդին. այս վերջինն արտօնած է Պ. Աբէրիի այդ դեղահատները պատրաստելու և վաճառելու իրաւունքը.

Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղարան ՎԷԼԻՑ, Ղալաթիա, և մայրաքաղաքիս գլխաւոր դեղարանները.

1870

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑՔ ԹԷՅԻ
ԷՄ. ՊԱՂԱՊԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԱԾՈՒՄՆ
Չինաստանէն, Հնդկաստանէն եւ Ճաբոնէն
12 — [illegible], Ճէլէպի խան, — 12
[illegible]
ՆԵՐԱԾՈՒՄՆ—ԱՐՏԱԾՈՒՄՆ

Քանի տարիէ ի վեր թէյի մեծաքանակ առեւտուր ընելով, դրամագլուխ ընելով զայն ի Ռուսիա և Պարսկաստան, բազմաթիւ անձանց խնդրանաց վերայ որոշեցինք քաղաքիս մէջ Թէյի կեդրոնական վաճառատուն մը հաստատել «մեծաքանակ» և «փոքրաքանակ» վաճառմանց համար. Վաճառականք, դեղավաճառք, նպարավաճառք եւ բնասնիքներն, որք վերահաս ձմեռան պատճառաւ իրենց պաշարը կը պատրաստեն, եւ անոնք որ կ՚ուզեն ոչ միայն լաւ, հապա նաեւ «աժան» թէյ ունենալ, կը հրաւիրուին այցելել «Թէյի մեծ մթերանոցներն» եւ գոհ պիտի մնան.

2187

Տուփերուն վրայ պահանջել Էմ. Պաղապանի եւ Ընկ. ստորագրութիւնն եւ Աքաղաղի պատկերն.

ՏՈՒՔԹՈՐ ՋՕՀՐԱՊ

Բժիշկ Շիշլիի գաղղիական Լա-Բէ հիւանդանոցին, վաղեմի ներքին բժիշկ Լիոնի եւ Սէնդ Էդիէնի հիւանդանոցաց (ի Գաղղիա), Թղթակից անդամ Լիոնի բժշկական ազգային ընկերութեան, մասնագէտ Ականջի Կոկորդի եւ Քթի հիւանդութիւններուն եւ ելեկտրական դարմանաց, այցելութիւնք կ՚ընդունի առաւօտներն (ժամ 10 էն 12) իւր տանն որ ի Մեծ փողոց Բանկալթիի թիւ 75. կէս օրէն վերջ ի Սրամպօլ Վաղիդէ գարու Մէրգամէթճեան դեղարանն թիւ 18, ուր ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ.

1659 17—81

ՏՈՒՔԹՈՐ ՃԻՎԱՆԵԱՆ. պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ կ՚ընդունի հիւանդներ ամեն առաւօտ մինչեւ ժամ 7 Բերա Եէնի-Չարշը Պօստան Պաշը փողոց թիւ 82.

Կը դարմանէ մասնաւորապէս Ջղային և կուրծքի հիւանդութիւններ, աչքի ցաւեր և վիրաբուժական դարմանի կարօտ ախտեր.

Հինգշաբթի օրերը աղքատ հիւանդները ձրիապէս կը դարմանէ.

2201 3—3

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆՎԷՄԱԱՏԻՆՆԷԶԱՐԷԹԻ ՈՒՄՈՒՄԻՅԷՍԻ

Էնգիւրի վիլայէթի ճէլիլէօնիւնտէ քային քիլ մատէնի, օն իքի պին լիրայի սամանի պէտէլի սէնէվի իլէ Թալիպի էօհտէսինտէ պուլունմատըղընտան, պէտէլի մէզգիւրէ զամմ իլէ մատէնի մէզգիւրէ Թալիպ օլանլարըն վէ իզահաթ ալմագ իսթէյէնլէրին քեանունի էվվէլին պիրինճի բէնշէմպէ կիւնիւնէ գատար Տէրսաատէթտէ Մալիյէ նէզարէթի ճէլիլէսի տայիրէսինտէ Օրման վէ Մէատին իտարէյի ումումիյէսինէ վէ մահալլինտէ մէրքէզի վիլայէթէ միւրաճաաթ էթմէլէրի իլան օլունուր.

Ֆի 24 Թէշրինի սանի սէնէ 304

2286

Քէզա

Թօգաթ գազասընտէ մէվճուտ [illegible] [illegible] սէնէյի հալիյէ քեանունի էվվէլին [illegible] կիւնինէ գատար միւզայէտէսինէ [illegible] քեանունի էվվէլ [illegible] Օրման վէ Մէատին իտարէյի ումումիյէսինէ վէ մահալլինտէ մէրքէզի վիլայէթէ միւրաճաաթ էթմէլէրի իլան օլունուր.

Ֆի 24-Թէշրինի սանի սէնէ 304

2287

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Վիէննա մալի ֆէս օն պէշ պին ատէտ պէհէրի ալթը պուչուք ղուրուշ.

Պէյազ քէչէ սալթիյանը իքի պին ատէտ պէհէրի օն պէշ ղուրուշ.

Պէյազ Գարահիսար քէչէսի պին պէշ եիւզ ատէտ պէհէրի եիրմի իքի ղուրուշ օթուզ փարա.

Բանթօլօնլըգ գուրշունի չուհա պին մէթրօ պէհէրի բըրք պէշ ղուրուշ.

Բուտէլի խալի սիյահ եիւզ ղալթան օթուզ պին մէթրօ պէհէրի սէքիզ փարա.

Նիզամիյէ էյալիւէ վէ սարրաճխանէ անպարլարընա միւպայաա օլունաճագ պալաթէ մուրագգամ պէշ գալէմ էշեա ֆիյաթը մուրագգամլարը իլէ Թալիպլէրի էօհտէսինտէ օլուպ Թէշրինի սանինին սէքիզինճի փազար էրթէսի կիւնիւնէ գատար պէհէր կիւն միւնագասալարը իճրա օլունաճագ մէզքիւր գալէմլէրի վիրիլէճէկլէրինտէն իհալէ [illegible] վէ Թէմինաթ աքչէլէրի իլէ [illegible] մէզքիւրէ կէլմէլէրի իլան օլունուր.

22 Թշրինի սանի 1888 2247
Նօ. 10 3—3

AU CROISSANT Օ ԳՐՈՒԱՍԱՆ
94, Նիւքսէք Գալտըրըմ, Վօյվօտայի գիմաց, 94
ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ
Արանց, երիտասարդաց եւ տղայոց համար

Օ Գրուասան վաճառատունը ծանօթ է իւր վայելուչ և հաստատուն հանդերձներով.
Օ Գրուասան վաճառատունը ծանօթ է իբր ամեն տեղէ աւելի աժան վաճառող.

Ամառնային Եղանակ

Ամբողջ քոսթիւմ, կապոյտ, սեւ- շագանակագոյն կամ ֆանթէզի չէվիօթ, զուտ բուրդ, լաւ կարուածք, խնամօք կարուած	32 Ֆրանք
Պանթալոն և ժիլէ կամ Ռըտէնկոթ և ժիլէ՝ Ռուսկէի ֆասոնի կամ գծաւոր, վերջին նորաձեւութիւն	38 Ֆրանք
Գծաւոր պանթալոն, հաստատութիւնն երաշխաւորեալ, վերջին նորելուկ	13 Ֆրանք
Բարտըսիւ միջինակ կամ գծաւոր, վայելուչ կարուածք, մեծ խնամքով կարուած	36 Ֆրանք

1506

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

“ՖԻՆԻՔՍ„

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և համրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն ։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 16,000,000 Անգղ. ոսկոյ գումարն զոր յարդ վճարած է հրդեհի վնասուց համար ։ 1799

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակին՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոցս, որք ունիմք լիագոյն իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն ։

Հ. ՍԹԻՄԱՆ և ԸՆԿ. միակ գործակալք ի Պոլիս և ի Շրջակայս

Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒԻՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆրանք	**8,000,000**
Պահեստի դրամ աւելի քան	»	**4,000,000**
Տարեկան հասոյթ	» »	**7,500,000**

Ընկերութիւնքս **ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ** կ'ապահովագրեն մթերանոցներու և բնակութեանց մէջ վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակարգօք ։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆրանք **6,250,000** Պահեստի դրամ ֆրանք **1,270,300**

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև Թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակարգօք ։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան **13** լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան **100,000,000** ֆրանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Եօռկիատիս խան.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եւրոպեան առաջնակարգ դրամատուներ ցոյց պիտի տրուին անոնց, որք Ընկերութեանցս վերայ տեղեկանալ կը փափաքին ։ 2176

ՄԻ ԳՆԷՔ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ

ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԷՍ ԱՅՑԵԼԵԼՈՒ

ՍԻՆԿԷՐ

Ամերիկեան գործարանի մթերանոցներն

Ի ՂԱԼԱԹԻԱ, Եւրոպէք Գալտըրըմ,

120

Քարաքէօյի աղբիւրին դէմ.

Ի ԲԵՐԱ, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ

Ի ՊՈԼԻՍ, Մահմուտ փաշա, 90

Ուրիշ ամեն տեղ՝ «Սինկէրի» կարի մեքենային «կեղծերը» միայն պիտի գտնէք ։

Վ ՃԱՐՄԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթական) 1761

ՀԱԶՄԱՏՈՒՆ

Ի ՊԱՑՕՂԼ ՀԱՆԻՆ

ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕՔՈՒՇՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Սոյն կազմատան մէջ կան Եւրոպական նորընտիր և կատարելագործեալ մեքենաներ որոնցմով կը կազմուին և կը յօրինուին

ԶԱՆԱԶԱՆ ՁԵՒԵՐՈՎ

ԳԻՐՔԵՐ գեղեցիկ և հաստատուն

ՏՈՒՄԱՐՆԵՐ, վաճառականական և

ԱՑՑԵՏՈՄԱՆԵՐ, խիստ մաքուր և ընտիր ։

Յաճախորդաց դիւրութեան համար կազմատունս ունի իրեն կցորդ վաճառատուն մը թիւ 27 Ֆինճանճըլար-Եօգուշը, ուր կ'ընդունուին յանձնարարութիւնք և ուր կը վաճառուին նաև գրագրական ամեն տեսակ պիտոյք, ընտիր թուղթ գրիչ, մատիտ, պայուսակ, գրապանակ եւ եւն ։

736

ՖՐԱԺԷԻՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՔ

Արծաթեայ առարկայներ, սեղանի սպասներ եւն ։ Թիւնէլի բասաժը, Բերա 1818

VICHY

ՎԻՇԻ

Ֆրանսա (գաւառ Ալիէի)

ԿԱՌԱՎԱՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վարչութիւն՝ Փարիզ, 8, Պուլվար Մօնմարթր

ՀԱՆՔԱՋՐՈՑ ԵՂԱՆԱԿ

GRANDE GRILE ·— Աւշային տկարութիւնք, մարսողական ճանապարհաց հիւանդութիւնք, լեարդի և փայծաղի խըցումն, ներքին գործարանաց խցմունք, մաղձային քար եայլն ։

HOPITAL·— Մարսողական ճանապարհաց հիւանդութիւնք, ստամոքսի ծանրութիւն, դժուարամարսութիւն, ախորժակի պակասութիւն ստամոքսի, ջղացաւ, անմարսութիւն ։

CELESTINS·— Երիկամանց և փամփուշտի տկարութիւնք, միզական աւազ և միզական քար, յօդացաւ, շաքարախտ (Տիապէթ), սպիտակուց-միզական (Ալպիւմինուրի) ։

HAUTERIVE·— Երիկամանց և փամփուշտի տկարութիւնք, աւազ, քար, յօդացաւ, շաքարամիզութիւն, սպիտակուց-միզական ։

Աղբիւրին անունը պէտք է փնտռել շիշերու քարսիւլին վրայ ։

Պոլսոյ ամեն դեղագործաց և դեղավաճառաց քով կը գտնուի ։ 667

Արտօնատէր Օ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐԻ

Coleman's
Liebig's
Extract of
MEAT & MALT
WINE
HUNDREDS OF TESTIMONIALS HAVE BEEN RECEIVED FROM MEDICAL MEN

ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մ'է, բաղկացեալ Բորդոյի գինիէ, Լիէպիկի մսի հիւթէ և Մալթի հիւթէ, կազմելով այսպէս անուշահոտ, զօրաւոր և դրգռիչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ անկար մարդոց համար լաւ է հաւասարապէս ։

Բժշկական համալսարանն հաւանած է նմա և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է ։ ՀԱԶԱՐԷ ԱՒԵԼԻ ԲԺԻՇԿ գրած են իրենց վկայութիւններն ։ Ահա կը թարգմանենք վկայութիւնն տարբեր

Թ. ՌԷՃԻՆԱԼՏ ՃՈՆՍԻ, Մ. Ռ. Ս. Ս. Լ. Լ. Մ. Փ. Ս. Ռ. Ճ. ԵՒ ԸՆԿ.

26, Լորտ Րոտ և 24 Համիլդըն Սգուէյր

Պրէնթֆորտ, 2 սեպտեմբեր 1888

Պարոնայք — Ի նկատ առնլով խորդաւ մրցման մը հասած գինոյն լուրերը, կը փափաքիմ յայտնապէս գրուցել ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մսի և Մալթի պատրաստութենէն. Քանի քանի անգամներ տեսած եմ սոյն առողջարար ազդեցութիւնն այն հիւանդութեանց վրայ որոց համար պատուիրած եմ զայն, և ինչ ինչ պարագայից մէջ ձեռք բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս պարզ գինին (առանց մսոյ) չպիտի կրնար տալ ։

Ընդունեցէք, և այլն և այլն

Թ. ՌԷՃԻՆԱԼՏ ՃՈՆՍ

Ի վերջոյ, մայրաքաղաքիս գլխաւոր բժիշկք ջերմապէս յանձնարարած են զայն ։

Հարցնել ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ Լիէպիկի մսի և Մալթի խառնուրդով, զգուշանալ կեղծերէն ։

Դիմեցէք ստորագրելոյս, միակ գործակալ ի Թուրքիա Գոլիման և ընկերութեան գործարանին Ս. Ճորճս Նորուիչ և Լոնտոն ։

ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահակատեղին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից թիւ 95 և 97, Ղալաթիա 2170

ՄՈԳԱԿԱՆ ՆԵՐԿ



Նոր գիւտ մ'է այս մազերուն գոյնը փոխելու համար մէկ երկու անգամէն, առանց ուրիշ ո և է նիւթի գործածութեան կամ լուացքի,

ՇԱԳԱՆԱԿԱՆԱԳՈՅՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՍԵՒԻ

Այս նոր ներկը բաղկացեալ է միայն արմատներու և խոտերու նիւթէ ։ Սպիտակ կամ կարմիր մազերն անմիջապէս կը փոխուին պայծառ շագանակագոյնի կամ թանձր սեւի ։

Փորձը ցոյց տուած է թէ այս ներկն որչափ գերազանց է նմանօրինակ ուրիշ պատրաստութիւններէ ։ Իւր առաւելութիւնն է մազերուն ամենէն բնական երեւոյթը տալ և ամենէն ուշադիր դիտողն ի դերեւ հանել ։ Կը կասեցնէ հերաց անկումը, գլուխը կը մաքրէ, թեփը կ'անհետացնէ և նոր ոյժ կուտայ մազային մարմին ։ Ուշադրութեամբ կարդալ

ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Սրուակը երերցնել գործածելէ առաջ և փոքր քանակութեամբ հեղուկէն դնել սկաւառակի մը մէջ, յետոյ բարակ պզտիկ սանտրով մը կամ այդ հեղուկին մէջ թրջած բամպակով մը թեթեւ կերպով մազերուն վրայ անցունել զայն, այնպէս որ ամբողջ մազերը թրջին ։ Ասոր գլուխը բաց պահել մինչեւ որ հեղուկը չորնայ ։ Բայց մազերը [illegible] մէկ երկու գործածութեան պէտք ունին, այդ համար մէկ անգամ մը բաւ է ։ Եթէ մէկ երկու անգամէն աւելի գործածուի, գոյնն աւելի թանձր կ'ըլլայ ։ Անգամ մը որ ուզուած գոյնը ձեռք բերուած է, գոյն [illegible] պահելու համար կը բաւէ երեք չորս շաբաթն անգամ մը հեղուկէն գործածել ։ Նոյն եղանակը գործածելու է մօրուքին և պեխերուն համար ։ Պէտք չէ գլուխը լուալ գործածութենէն առաջ կամ ետքը ։ Բնականաբար վերջէն դէմքն և ձեռները լուալու է առ ի զգուշութիւն ։

ԾԱՆ. Եթէ ուզուած գոյնը ձեռք չբերուի մէկ երկու գործածութենէ ետք, գլուխը լուալու է քիչ մը օճառով, ապա գլխուն քսելու է այդ ներկին մէջ թեթեւապէս թրջած սպունգ մը, և ուզուած ազդեցութիւնն յառաջ կուգայ անմիջապէս ։

ԿԵՂԾԵՐԷՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ

Միակ կեդրոնատեղի ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ, Վոյվոտա, Պահակատեղին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, թիւ 95 և 97, Ղալաթիա ։

2166



ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ-ՈՅԺ ԿՈՐՈՎ

ՖՈՍՖՈՏԻՆ ՏՈՔԹՈՐ ԼԱԼՕՐԻ — Վերջին քսան եւ հինգ տարուան մէջ ապացուցուած է է թէ այս դեղը ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՄԻԱԿ ԴԱՐՄԱՆՆ է որ մինչեւ ցարդ գտնուած է, կատարելապէս բուժելու համար ուղեղի հիւանդութիւններն, անզօրութիւն, քնատութիւն, զառանցանք, առնական կարողութեան վաղաժամ կորուստ, եւ առնական ոյժերու կորուստէն յառաջ եկած ամեն գործարանական խանգարումն ։

Կը բուժէ դժուարամարսութիւնը, ջղային եւ սրտի հիւանդութիւնները, լեարդի եւ երիկամանց հիւանդութիւններն, արեան ջղային բոլոր խանգարումները ։ Ընդհանուր հիւծութիւնն եւ սպառումը ։ Կը կասեցունէ կենսական ոյժերու ո եւ է կորուստ որ յառաջ եկած է ո եւ է պատճառէ ։

Ջղային տկարութեան եւ ասոր հետեւանաց մէջ այս դեղին ազդուութիւնն անմիջական և մնայուն է ։ Մելամաղձութեան զգացումներն եւ ախտանիշք կ'անհետանան ճշմարտապէս հրաշալի արագութեամբ մը ։

ՏՈՔԹՈՐ ԼԱԼՕՐԻ ՖՈՍՖՈՏԻՆԸ ջղային հիւթ եւ ուղեղային գոյացութիւն կ'առեղծէ, արեան մէջ մատակարարելով կենսական ելեկտրական տարրը, ֆոսֆորն, որ ուղեղին կեդրոնական ճշմարիտ գոյացութիւնն է ։ Առնական կորովը կը կենդանացունէ մարդկային ամբողջ դրութեան մէջ, մարմնոյն եւ մտքին տալով հաստատուն եւ առոյգ առողջութիւն մը այնպէս որ կարելի է բոլոր պարտականութիւնները կատարել վստահութեամբ եւ գոհունակութեամբ ։ Ախորժակ կուտայ, կը զտէ եւ կը ճոխացնէ արիւնն եւ նոր առուգութիւն մը կուտայ ուղեղին, ջղային դրութեան եւ մկանանց ։ Իւր վերանորոգիչ ազդեցութիւնը կը տեսնուի գործածուած առաջին օրէն իսկ, ջղային դրութեան եւ մտաւորական կարողութեանց նշանաւոր յաւելմամբ եւ զօրութեան եւ բարօրութեան զգացմամբ մը որ վարժութիւնն հիւանդը շատոնց ի վեր կորսնցուցած էր ։ Առողջութիւնը վերանորոգուած է ։ Ախորժակը հրաշալի կերպով կ'աւելնայ ։ Աղեաց պաշտօնը կանոնաւորապէս կը կատարուի ։ Քունը կը լինի հանդարտ եւ կազդուրիչ ։ Դէմքը կ'սկսի լենալ, շրթունքը կը գունաւորին, աչքերը շողուն կը լինին, մորթը պայծառ եւ առողջ գոյն մը կ'առնու, մազերը ոյժ կ'առնուն ։

Զգուշացէք ասոր նմանութիւններէն ։ Տոքթոր Լալորի ճշմարիտ Ֆոսֆոտինը պարունակեալ է այն ամեն շիշերուն մէջ որք բրիտանական կառավարութեան դրոշմը կը կրեն սա բառերով Dr. Lalors' Phosphodyne, London, England, վրան փորագրուած ։ Այս դեղին ունեցած յաջողութիւնն յառաջ բերած է բազմաթիւ վտանգաւոր եւ վնասակար կեղծեր ։

Մեծաքանակ եւ փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով,

2169 Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա, պահակատեղին քով, կայարան Թրամուէյից, 95 եւ 76.

ՄԻԱԿ ՄԹԵՐԱՆՈՑ ԳԱԼՈՐԻՖԵՐՆԵՐՈՒ



ՌՒԽԹ ԱԼՖԻՐԶ· ՎԻԵՆՆԱ

Հ. ԼԱՆԺ

24, Բէյօղլու փողոց, 32, Մահմուտիյէ փողոց

ՎԱՌԱՐԱՆՔ ԵՒ ԾԽՆԵԼՈՅՋՔ

Նորագոյնեան առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ՋՄԻԿՆԵՐ

Նրանկարանի վերալուծեալ մանր առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԻՆԵՐ

(Պղինձ, ձուլածոյ և թիթեղ երկաթէ)

ԵՐԿԱԹԵԱՅ ՄԱՆՐ ԳՈՐԾԻՔ

Ամեն տեսակ գործիք—[illegible]

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ

Յատաքնդիչ-Կալսող-Ցորենի կշռորդ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԱՆԱԿՆԵՐ

ՃՈՒ ՀԱՒՔԱՑՈՑ ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ



ՅԱԽՃԱՊԱԿԻԷ, ԹԱՓՄՈՒԷ ԷՆ.

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 676

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԻՒՂՈՑ ԱՆՀԱՄՆ ԵՒ ԱՆՀՈՏ

HUILE DE HOGG

ՄՈՐԻՆ ՁԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԻՒՂ

Որոյ ազդուութիւնն հաստատուած է 25 էն աւելի տարիներու փորձով հետեւեալ հիւանդութեանց համար. կուրծքի հիւանդութիւն, թոքախտ, թոքառաջնց հիւանդութիւն, հազ, յամառ հազ, խոյլ, աւշային գեղձերու ուռոյցներ, մորթի հիւանդութիւնք, [illegible], սպիտակ դաշտան, ընդհանուր տկարութիւն և այլն. Նաև տկար և փափկակազմ տղաքներ զօրացնելու համար շատ պիտանի է ։

Զգուշանալու է սովորական իւղերէն և մանաւանդ անոնցմէ որ շահասիրական նպատակներով բնական իւղերու տեղ և իբր թէ անոնցմէ աւելի ազդուութիւն և ախորժ համ տալու համար շինուած են ։ Այն իւղերն [illegible]

Բնական և զուտ ձկան իւղ գնելու ապահովութեան համար պէտք է գնել ՀՕԿԻ ԻՒՂԸ, [illegible]



[illegible] 1883 տարւոյ յունուար 1 էն սկսեալ Հօկի մորի ձկան բնական իւղի շիշերուն [illegible] վրայ Գաղղիոյ կառավարութեան կնիքն [illegible]

Թուրքիոյ համար ընդհանուր մթերանոց

Փ. Գ. ՏԱԼԵԱՆ, Պոլիս 2191

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ԲԻՒԼԱՅԸՆՍ

Ծովային ապահովութիւն.—Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Պ. Վ. Ուիթօլ, Ուիթօլ խան Պահչէ-գաբու Պոլիս. կամ Ղալաթիա Մէրթէկպանի փողոց Իզզէթ բաշա խան թիւ 6. 686



ՌՈՒՍԵՒԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՔԱՕՒՉՈՒԿ ՄՈՒՃԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ի ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ

1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГ.

ТОВАРИЩ.РОСС.АМЕРИКАНСК.
РЕЗИН.МАНУФАКТ.

RUSSIAN-AMERICAN INDIA RUBBER C°

Ստորագրեալս, ներկայացուցիչ յիշեալ գործարանին, պատիւ ունիմ ծանուցանել հասարակութեան թէ տեսնելով այն յաջողութիւնը զոր ունեցան ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՕՒՉՈՒԿ ՄՈՒՃԱԿՆԵՐՆ իրենց վայելչութեան և հաստատութեան պատճառաւ, անոնց շատ մը կեղծերը շինուած են, եւ հետեւաբար անոնք որք կ'ուզեն բուն ՃՇՄԱՐԻՏ ՄՈՒՃԱԿՆԵՐԷՆ գնել, պարտին ուշադրութիւն ընել գործարանի նշաններուն որք դրուած են մուճակներուն ներքանը վրայ ։

Փոքրաքանակ կը ծախուի բոլոր կօշկակարավաճառաց քով

Լ. Ճ. ՄԷՐՃԱՆՈՖ

Ներկայացուցիչ ընկերութեան՝ մեծաքանակ վաճառման համար ։

Պահչէ-Գաբու, Պոլիս,

21—25 2085